



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

33

2531

2532

2533

84

4L-79

10

11



707

6850.57

(08)+8-3

Ա. ԹԻԳՐԻ

ՓՈՒՆՁ

ԿԱՐ

ԱՅՐ, ԿԱՆԱՅՔ ԵՒ ԱՄԱԽԱՆԱՔԻՒՆ

ԱԶԱՏ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՕՐԲԵԼ

Կանաչ և ամառավերան վըսոյ
 լիւ ու կ'ուղլն լոռզ շուն, հարդիկ
 ու ամառավերան և ու կիւնեցէ կը
 հրաժարվին :

Բ. ՏՊԱՎՐՈՒԹԻՒՆ

Ի Զ Ա Ւ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ Դ. ՄԱԵՐԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքը ամենէ ընտիր բառզիրքն է , վասն զի քանի մը հարիւր երեսի մէջ՝ ամեն բարոյագետներու , բանաստեղծներու և լիովառամներու՝ սիրոյ , կանանց և սմուսնութեան վրայ ջրհեղեղէ սկսելով մինչև մեր օրերը՝ ըսած ամենէ հանձարեղ և կծու խօսքերը կ'պարունակէ իրեւ գովեստ կամ պարսաւ :

Պղտիկ ու մեծ աղջիկներու , երիտասարդ և ծեր ամուրիներու համար քաղուած , ամուսիններու՝ ինչպէս նաև սիրուհիներու , սիրահարներու և էրիկներու լու ագոյն խրատները կուտայ , և արս փորձառութեան դասերը երկու սեռէ ամենամեծ հեղինակներէ գրուած ըլլալնուն՝ ևս առաւել թանկազին են :

Ուրատիսի խրատին համեմատ այս վճիռները կտրուկ են և ատ ալ մեծ արժանիք մ'է , վասն զի , ինչպէս որ Ճիննեվրացի վիխտիայ մը կ'ըսէ՝ Զոկ գաղափարներու համը՝ կտրուկ ըստ ածքէ մը կախում ունի . աղի և շաքարի հատիկներ են անոնք զորս կաթիւ մը ջուրի մէջ հալեցնելը սլէտք է գիտնալ :

Աւրիշի պէս մենք ալ կրնայինք դիւրաւ մեծ հատոր մը չինել . նիւթը չեր պակսեր , բայց Գալիմաքոսի այս խօսքը յիշեցինք — Մեծ հէրք ճը մէծ շարք ժ'է . ուստի խոհեմութեամբ՝ անբաւ առասութեան մէջէ ընտրելով , լաւագոյն համարեցինք՝ քիչ բայց աղէկը ջամրել . ծանրութիւնը լինեն կոխաւ չունի :

ԿԱՐԵՒՈՐ ԾԱՆՈՒՅԹԻՄ

Ընթերցողը պէտք է միտքը դնէ թէ այս
առածներու մէջ մասնաւորագէս լրեն նկա-
տող առած մը չկայ, թէև ասոնք ընդհա-
նուր կ'երեխն, ինքը մինակ բացառութիւն
մ'է: Եթէ այս ընէ՝ կ'երաշխաւորեմ որ ինքն
ալ պիտի ընդունի և ստորագրէ զանոնք:

Լոբօնիչուս

Ա Շ Ֆ

(սահմանում)

—Եիրոյ պատճառը՝ զգիտեմ ինչ մ'է, և
անոր հետեւութիւնները անհաւասալի են, այդ
զգիտեմ ինչը անանկ պղտիկ բան մ'է որ աչքի
չերեկիր անգամ, այլ բոլոր երկիրս տակուվրայի
կ'ըերէ և իշխանները, բանակներն ու բոլոր
աշխարհները կ'վրդովէ և կ'յուղէ և եթէ Քլէօ-
քաթրայի քիթը աւելի կարճ ըլլար, երկրա-
գնատիս բոլոր երեսը պիտի փոխուեր։

— Աւրը բոլոր մարդուն կեանքը կ'սահա-
մանէ :

Մասկետն

— Աւրը շտո չնշին՝ բայց կենաց ամենէ
ծանր խնդիրն է :

Ցըտանին վեց

— Դպրոցի աշակերտք դաղանի կ'զբաղին
այն բաներով որոնք դպրոցի աշակերտուհի-
ները կ'զբաղեցնեն, ինչ որ ընկեռ ասոնք սի-
րոյ՝ և անոնք կնիկի վրոյ պիտի խօսին միշտ։

Պաշտա

— Աւրը փոխադրական ախտ մ'է որ իր
զնէրը կատաղի կ'դարձնէ :

Համբելուն

— Աւրը աւելի դառնութիւն քան քաղ-
ցրութիւն ունի :

Օվերեն

— Աւրը ամեզերքին ճարտարապետն է :

Հեղիսոր

— Աշխարհիս կառավարն է :

Պատգամ

Վ — Այդ վռանգաւոր մանուկը որ այնքան
փափուկ և միանգամայն անողորմ է, իր տկար
ձեռքին մեջ աշխարհիս ճակատագիրն ունի.

նա իր մէկ ժպիտովը պատերազմ կամ խա-
ղաղութիւն կ'սփռէ և ամենուրեք իր պատիր
քաղցրութիւնները բաշխելով տիեզերքը կը¹
կենդանացնէ և ամեն սրտերու մէջ կ'առլի :

Վ. Ը. Ա. Ե.

— Բօմբատուր մարքիզուհին Պէրնի ար-
քային հարցուց թէ ուրն ի՞նչ էր : Բանահիւ-
ոը պատասխանեց այս քառեակով, որ իր
հարստութեան և ստացած պատիւններու պատ-
ճառ եղաւ .

— Սէրը իմ տէրը՝ է մի պատանեակ
Բամբիչն, հովիւը՝ ու նոյն իսկ արքան
Ամենքը անոր են միշտ հըպատակ,
Դէմքովը ձեր՝ մտքովն ինձ նըման,
Քան զիս համարձակ՝ թերես էր ան :

— Սէրը մտային հաճոյք մ'է՝ որու տեա-
կանութիւնը մեզմէ կախում չունի և որ զը-
զուանքի ու զզջումի ենթակայ է :
Նի՞ն ու Աննիւ

— Սէրը ամենաքաղցր և լաւագոյն բարո-
յագէտն է :

Պ. Ա. Ե.

— Սէրը ամեն տռաքինութիւնները կ'սոր-
վեցնէ մեզիւ

Պ. Ա. Ե.

Աստուած՝ սէրը մարդուս հոգւոյն
տուած է իբրի թե, որպէս զի անով մինչև
իբրեւ բարձրանայ:

Մէկւ Անժել

Սէրն է մի մանուկ
Երկրի շափ ծերուկ
Որ աստուածներէ
Ամենէ մեծն է
Խամենէ պղտիկ.
Բայց երկիր երկինք
Խնչպէս նաև ծով
Անոր կը բակով
Զեղուն են և լի,
Եւ զարմանալի
Սա է հաւատա՛
Որ մըշտ ատիկա
Անոյշ աչաց մէջ
Երթոյ բընակի:

* * *

— Սէրը չգիտեմ ինչ մ'է որ չգիտեմ
որիէ կու գայ և չգիտեմ ինչպէս կ'լմնայ:
Ամեն կիրքերէ աւելի սէրն է որ մարդուս
բանականութիւնը կ'խանդարէ, ամենէ աւելի
հոգիները անկարգութեան մէջ կ'գնէ և ա-
նոնց ամենէ մեծ սխալները գործել կուտայ:
Դրեթէ բնաւ տարբերութիւն չգրուիր խեն-
թի մը և յիմարի մը մէջև. ասոնց երկուքին
աւ գործերը շատ կ'համաձայնին և եթէ խեն-

թութիւնը միտքը կ'խանդարէ, սէրն ալ մար-
դուս դատողութիւնը և խմացականութիւնը
կ'յուղէ: Եթէ սիրահարները նկատենք, ի-
րօք կ'տեսնենք թէ մին՝ ամեննեին չսիրուե-
լիք մէկը կ'սիրէ և ուրիշ մը սիրուելու ար-
ժանի մէկը կ'ատէ. մին տգեղը գեղեցիկ կը
դանէ և միւսը գեղեցիկը տգեղ. ասրկա կը
յարգէ զայն որ պէտք էր անարգել և ա-
նիկա կ'անարգէ զան որ պէտք էր յարգել:
Կան սիրահարներ որոնք իրենցմէ փախողնե-
րուն ետևէն կ'ըյնին, և ուրիշներ ալ որոնք
իրենց հետեւողներէ կ'փախին: Կոյրերն ան-
գամայս խենթերէն աւելի աղէկ ընտրութիւն
կրնան ընել, այնպէս որ բանականութիւնը ե-
թէ ընտրելագոյն բարիքն է՝ հարկաւ կ հե-
տևի թէ մեր բանականութիւնը մեղի կորոն-
ցընել տուող բանը ամենէ գէշ բանն է: Սի-
րոյ քիչ դատողութիւն ունենալը ճանչնալու
համար կ'բաւէ տեսնել միայն այն բաները
որոնցմով գոհ կ'ըլլայ, զանոնք իր ամենէ
սիրելի գանձերը կ'ընէ և անոնցմով իր բո-
լոր փառասիրութիւնը կ'լեցուի: Նայուածք
մը, ժպիտ մը, խօսք մը, չնչին պղտի տոմշ
ուակ մը, ժապաւէնի ողորմելի կտոր մը՝ իր
ամեն ցանկութիւնները կ'պատկէ, իր ամեն
յոյսերու առարկան է, իր բոլոր վշտերու վար-
ձատրութիւնը և բոլոր ծառայութեանց հա-

սուցումն է : Եւ սակայն այսպիսի մեծ բաներ
ձեռք բերելու համար հառաջելու և հեծե-
լու է , երկար ատեն՝ նաև անտրասունջ տա-
ռապելու է , յարատե խնամ մը , յաւիտե-
նական անհանգստութիւն մ'ունենալու է , ա-
խորժակն ու քունը կորսնցնել , չխօսիլ , չխբն-
դալ , դեղնիլ , այլակերպիլ , նիհարնալ , մտա-
խոհ և մելամաղձոտ ըլլալ պէտք է : Մարդ-
պէտք է բարեկամներէ հեռանալ , շահերը
և համբաւը երեսէ ձգել այսպիսի հաճելի
բանի մը բոլորօվին նուիրուելու համար . աշ-
խարհիս մէջ միակ անձ մը գտնուածի պէս
շարժելու , մինակ անոր նայելու , միայն զան
յարդելու է առանց անորմէ հեռանալու ինչ-
պէս որ ստուերը մարմինէ չհեռանար , 'ի վեր-
ջէ այդ անձին սիրահարն ըլլալէ ետք անոր
տաղտուկը պէտք է ըլլալ և ինքզինքդ շատ
սիրցնելու աշխատելով ատելի ընել պէտք ետ

Այլ անբաժանելի կերպով սիրոյ հետեւող
նախանձին հետ համեմատելով՝ այս ամենը
բան մը չէ : Զէ , դժոխքն անդամ չունի տան-
ջանք մը որ համեմատի այս կատաղի կրքին
որ մարդուս հոգին կ'այլայլէ , միտքը կ'վրդո-
վէ , զգայարանքները կ'շփոթէ , երեակայա-
կան ստուերներու կ'յարի , որ սուտը իրաւի
տեղ առնել կու տայ և երազները իրական
մարմիններ կ'կարծեցնէ : Նախանձը թոյնով

կ'անանի և կ'անուցանէ իր զրտած հոգին, այն օձերէ մէկն է անի որ իրեն ծնունդ տուողը կ'սպաննէ, իր ամենէ անոյշ երազները միտյն անդունդներ և առասաններ, թոյներ կամ դաշոյններ են, ոսոխի մը կամ նոյն խոկ իր մահը։ Այս կատղութեան շղթայտղերծ առաւածէն ծնունդ առած են րիւր սպաննութիւններ և ուրիշ տեսակ սոսկալի օճիրներ։ Անոր համար այս սիրցնող կրքին նկարագրութիւնը ընելու ատեն բանապահնեղները իրրե պատահնեակ մը ներկայացուցած են մեզի անոր անմտութիւնը ցուցնելու համար, աշքեցը կապով մը կուրցած նկարագրած են յայտնելու համար այն սխալները որ այս խենթութիւնը հետը կը բերէ, ձեռքը զէնքեր առաւած են բրած չարիքները յայտնելու, և ջահ մը՝ հասկցնելու համար այն դժնդակը բորբոքումը որով մարդուս հոգին կ'վառէ և կ'լուխիէ և որ երբեմն տուններ, քաղաքներ, գաւառներ և ամբողջ տէրութիւններ կ'որանած է։

Օբեռբե Առեւորերէ

— Սիրելը երկու հոգիններու մէկ ըլլալն է. մարդ մը և կին մը որ ՚ի մի հրեշտակ կ'ձեւլուին, արքայութիւն ըսել է։

Վ. Հենիք

— Աէրը լսիող կրակ մ'է որ որքան շուտով վառի և շուտով այրի այնքան շուտով կ'մարի :

Ա. Պէտր

— Աէրը աւելի աղէկ ճանչցուած պիտ'ը լշար եթէ ըսէին թէ բարեկամութիւն մ'է, ու ըուն գլխաւոր առարկան այն մասերնիս է ու ըով անբան կենդանիի կ'նմանինք :

Օժէնութեւն

— Աէրը՝ անկանոն ախորժի մը կ'նմանի զոր ուրիշ կերակուրէ մ'աւելի այս ինչ կերակուրին համար կ'զգանք առանց պատճառը բացատրել կարենալու :

Նէնծն առ Լանդլ

— Աէրը շատ կ'նմանի պարտէզի մը՝ որուծայրը շուտ մը կ'համութի եթէ ընելիք ճամբանիս խել մը ծաղկալիք և հոտաւէտ շրջանաներով երկնցած չըլլար :

Ա. Պէտր

— Աէր, արական և իդական գոյական անուն . փոխանակութիւն երկու ճաշակներու, առանձնաշնորհութիւն ամեն խենթութիւններու որ կընանք ընել և ամեն յիմարութիւններու որ կընանք ըսել. — Ոմանք կապիկները կ'սիրեն, թռչունները կ'սիրեն, պարը կ'սիրեն, իրենց սիրահարը կ'սիրեն և երբեմն

նոյն իսկ իրենց էրիկը . ժամանակաւ սիրաւ
հարք կ'տառապէին , կ'հալէին , սէրէ կ'մեռա-
նէին , հիմա սիրոյ վրայ խօսին , կ'բամբառեն ,
դայն 'ի գործ կ'դնեն և ամենէ ստէպ ծախու-
կ'առնեն :

Ժ. Առ

— Սէրը՝ Աստուծմէ աւելի զօրաւոր է ,
վասն զի երկու հոգին մէկ կ'ընէ :

Լապուշն

— Զիայ այնքան չար մէկը՝ զոր սէրը ա-
ռաքինութեան աստուածի չփոխէ :

Պլուտոս

— Սէրը ամեն բանի կ'յաղթէ :

Վերաբեկս

— Սէրը յիրաւի՛ է հըզօր իշխան
Ծանըր մագիստրոսն , սրտոտ զինականն
Փոխանորդն անյագ , հեղ'համբոյլը աբրան
Ազ ահ վաշխառուն , շատխօս փաստաբանն
Անգղըն գիշատիչ , ամեն կենդանի ,
Մարդասէր , անգութ , ծեր և նորատի ,
Թէ երկրի վրայ , և թէ ջուրի տակ
Կամայ ակամայ , են իր հպատակ :

Տերենց

—Առ իմ գեղանի տարփուհին ,

Կախերես ծերերն թող տուր տըրտըրան
Մենք ապրինք միայն սիրուելու համար
Սիրելիս Լեսպի, ջանանք միարան
Յաւէտ մնալու մենք մեր սիրով վառ :

Երբոր կը մարի արե լուսատու ,
Դարձեալ կը ծագի երկրորդ օրն առառ
Այլ երբ մեր կեանքի լոյսը կը մարի . . .
Ալ լմբնցաւ այն — մ'սպասեր վառի :

Եկ օգուտ քաղենք — վաղանցուկ է կեանք
Տուր ինձ հարիւր պաչ, տուր ևս հազար
Եւ որպէս զի թիւն մենքալ չը դիտնանք
Շատ մը համբոյըներ եկ խառնենք իրար :

Սիրեն է ապրիլ — սիրելիս Լեսպի !
Երդնունք որ մեր սէր երբէք չը մարի ,
Մէն մի ըուլէներ մեր անդին կենաց
Նուիրենք միայն լոկ սիրոյ բարեաց :

Քանիւն

— Աէրը յանկարծ կ'ծնի, սիրեք կամչսի-
րել մեր ընտրութենէ կախում չունի :

Քանիւն

— Մեր մտքի մէջ աիրող սէրը անկէ հե-

ևացնել ուզելը մեր ստուերին արգիլել է որ
արևին չերևայ:

Տէկն ու Ռէկ:

—Սիրելը՝ իր սիրուհիին միտքը առնել,
անոր պէս մնածել, անոր աչքերով տեսնել,
անոր սրտով դդալ, մէկ խօսքով բնութիւնը
փոխել և անոր եղածն ըլլալ է:

Պէտանի

—Սէրը երիտասարդներու թադաւորը և
ծերունիներու բռնաւորն է:

Օժոկնութեն

—Սէրը ամենագեղեցիկ հոգիներու մէջ
կ'ընակի ինչպէս որ կրծան որդը ամենէ գե-
ղեցիկ վարդի կոկոնին կ'փակի:

Շեշտաճեր

—Ճշմարիտ սէրը ոգիներու երեսումին կը
նմանի — ամեն մարդ անոնց խօսքը կ'ընէ
բայց քիչեր տեսած են զանոնք:

Լարօնքութեան

—Սէրը կրակի կ'նմանի, որքան ծածկուի
այնքան կ'դիմանայ:

Տէրէնոյն

Սէր! անծին ցանկութիւն! Հոգի բնու-
թեան! գոյութեան անսպառ սկիզբ! գերա-
դոյն զօրութիւն որ ամեն բան կընայ ընել

և որու դէմ բան մը ոշինչ չկրնար ընել, ու
րով ամեն ինչ կ'գործէ, կ'չնչէ և կ'նորողի!
Երկնային կրակ! կեանքի շունչին հետ ամեն
բանի մէջ տարածուած տեականութեան սերմ!
Թանկագին զգացում որ միայն ինքը կրնայ
սառ և վայրենի որտերը մեղմել զանոնք ա-
նուշ ջերմութեամբ մը ողողելով! առաջին
պատճառ ամեն բարեաց, ամեն ընկերու-
թեան, որ առանց բռնութեան միայն իր հրա-
պոյրներով վայրենի և ցիրուցան բնակիչները
կ'միացնէ! ամեն հաճոյքի և հեշտութեան
միակ աղբիւր! Սէր, ինչպէս կարելի էր զքեզ
աստուած մը չընել! ! !

Պէտքն

— Սիրեցէք, կեանքի մէջ աղէկ միայն
այս բանս կայ:

Ժ. Առն

— Սիրահարուած երիտասարդ մը՝ անա-
ռակ, շռայլ և փառասէր ըլլալէ կ'գաղքի,
իր բոլոր կիրքերը առկախ կ'մնան և միակ
կիրք մը իր բոլոր սիրտը կ'լեցնէ, միայն բա-
րի ըլլալու կ'փափաքի նառ Երանի անոնց ու-
րոնք զիրենք աւելի մարդասէր և նուազ ան-
զգայ ընող կիրքեր ունին:

Վ. օքնուարի

— Ո՞վ հրապոյր առաջին խարերու, զգաց-

Ճանց թարմութիւն, միամիտ և անփորձ ցան-
կութիւններ, կ'անցնիք կ'մարիք դուք իր
հայրենիքէ տարադիր եղողի մը երազներուն
պէս որ իր բացակայ հայրենիքի արելք կ'ե-
րազէ, ի՞նչ արագասահ կ'անցնին այն գեղե-
ցիկ օրերը որոնք վշտալիր ժամանակներ կը
կռչուին: Ով սէր, երբ ծերութիւնը կու գայ
մարդուս սիրտը զովացնելու, երեակայութիւ-
նը թմրեցնելու և անոր կեանքը զգաստա-
ցնելու, եթէ նա կ'սգայ քու վրադ, աւելի
քու շնորհքներուդ՝ քան թէ յետին վայելք-
ներուդ համար է:

Ֆօնտու

— Սէրը՝ որ էրիկ մարդոց կեանքին մէջ
լոկ դէպք մ'է, կիներու կենաց ամբողջ պատ-
մութիւնն է:

Տէկն ու Անոել

— Սէրը ամուսնութենէ աւելի հաճելի է,
այն պատճառաւ որ վէպերը պատմութենէն
աւելի զուարճալի են:

Եաժդօն

— Սէրը որտին մէջ աւելի դիւրաւ կ'մտնէ՝
քան թէ հոլը բաց տան մը մէջ *

Ակելանո

—Մեր սիրած առարկային ու ատկերը մեր
շուքին պէս ամեն տեղ մեղ կ'հետեւի։

—Միրահարութեան մէջ ընդհանրապէս
մէկը կ'սիրէ և միւոք կ'սիրուի։ Այս վերջին
նին սրտին մէջ չունեցած սիրոյն տեղը անձա-
նուիրութիւնը կ'լեցնէ։

Այս Բրօնքէք

—Միակ սէրը՝ որու վրայ մարդ մը կրնայ
վստահիլ, միակ սէրը՝ որու վրայ կրնայ հպար-
տանալ արդէն սիրահարներ ունեցած կնոջ
մը սէրն է։ — Նորատի աղջիան մը սէրը՝
յանգէտս անոր, երխուասարդին անձին հա-
մար չէ այլ աւելի անոր սեռին համար։ —
Նորատի աղջիկը կարելի է կ'սիրէ զքեղ ա-
խորժելի մարդ մ'ըլլելուդ, կամ լաւ ևս՝ կը
սիրէ զքեղ իրեն հետ սիրոյ վրայ խօսող ա-
ռաջին մարդը ըլլելուդ կամ աւելի պար-
զապէ՞՝ գու մարդ մը՝ և ինքը կին մը ըլ-
լալուն։ Ասոր մը, մէկ սեռի համար միւ-
սին ունեցած հրագորն է. Նորատի աղջիկը
զորիչը պիտի սիրէր եթէ զքեղ չսիրէր ՚ի
հարկէ. իր սէրը պէտքի մը լրումն է, ինչ-
պէս որ պիտի սիրէր նա իր ծարաւն յագե-
ցնող ջուրը նոյն խոկ երբ ազմուտ և անա-
խորժ ըլլոր։ — Իսկ երբ արդէն սիրահար

ունեցած կին մը զքեզ սիրէ՝ անհատի սէրը
կ'բլլայ այն, եթէ քեզ չհանդիպէր նա հա-
ւանական է որ և ոչ մէկը սիրէր. նա զքեզ
կ'սիրէ ինչպէս որ բիւրաւոր ըմպելիներու մէջէ
քնարած մէկ ըմպելիդ կ'սիրես և կ'խանու չէ
թէ ծարաւի ըլլալուդ՝ այլ անոր անոյշ և ա-
խորժահամ ըլլալուն համար :

Ա. Քառ

—Սիրելը՝ մեր չունեցած երանութիւնը
ուրիշէ մը խնդրել է :

Բ. Ռազմէութ

—Ի՞նչ է ուրեմն սէրը, ուրիշի մը հետ
ըլլալու այս պէտքը, այդ հիւանդութիւնը որ
չգիտեմ ինչու կեանքի մէջ որոշեալ օր մը
վրանիս կու գայ դիպուածով, առանց մեր
կամքին, երկու էակներու մէջ որ օտար էին
կամ զիրար տեսած չեն երբեք, որոնցմէ
մէկը սէ՝ միւսը ճերմակ, մին Աթենքէ և
միւսը Ախիոպէն է և բնութեամբ, նոյն իոկ
վիճակով ու բարքով ալ իրարմէ հեռի՝
Մարդո՝ այս սահմանաժակ արարածը որ ան-
բաւութեան պէտք ունի, միշտ իր չունեցա-
ծը կ'փնտուէ, իր ամենէ սառտիկ ներհակ բա-
նը։ Այսպէսով բարձրահասակները կարճեր
կ'սիրեն, շիկահերը՝ թիսերեսը, բանաստեղծ։

ները՝ խոհարարուհիներ, փիլիսոփաները՝ բո-
զեր . . . Աէր, սէր, յաւիտենական հանե-
լուկ, միթէ զքեղ պահող Սփինքսը՝ զքեղ
մեկնող Էօտիր մը պիտի շգմնէ՞ :

Ձեւէտս Բէ-

ՍԻՐԱՀՈՅ

—Ասհնարին է սիրահար և խոհեմ ըլլալ
միանդամայն :

Պատժն

—Սիրոյ մէջ սիրահարութիւն կեղծողնե-
րը աւելի կ'յաջողին քան անոնք որ իրօք սի-
րահարսւած են :

Նինժն ուռ Լանդլո

Լաւագոյն դասերն և իրատք իմաստուն
Թմբուկի ձայն են սիրահար մարդուն :

Քինք

—Սիրահարուած ըլլալուն համար երիտա-
սարդ մը պարսաւելը՝ հիւանդանալուն հա-
մար մէկունյանդիմանութիւն ընելու կ'նմնիւ
Տէսչլո

—Քիչ քօքէթ եղող կին մ'անդամ գիտէ

որ այս ինչ մարդը սիրահագուած է իրեն
դեռ այն մարդը չգիտցած :

Ֆլուէն

— Եւրը՝ քիմիակէտ մ'է : Սիրահար մը
գըեթէ միշտ անանի մարդու մը կ'նմանի որ
իր ձեռքը ածուխի կտոր մը զգուշիւ գրպա-
նը կ'ոզահէ — Աս աղամանդ է, բսելով :

Ոլու

ԱՐԴԻԱԿԱՆ ՍԵՐ

— Կան առ իթներ՝ որոնց մէջ իր հօրը գէմ
անպատկառ գտնուող որդւոյ մը կընայ կեր-
պով մը ներուիլ, բայց եթէ որ և է առթէ մէջ
տղայ մը իր պարտաւորած յարգանքը մոռ-
նալու չափ կ'տմարգանայ էր մօրը առջեւ որ
զիսքը իր արգանդին մէջ կրած, իր կաթով
սնուցած՝ և տարիներով իսքղինքը մոռցած
է միւակ իրժով դրաղելու համար, այդ տղան
շուտով խեղդ ել պէտք է ապրելու անարժան
հրէշի մը պէս *

Ժ. Ժ. Ռուսոս

Երբ որ մեր կիրքերու բոցը կը մեղմի՝
Սէրըդ որդիական, կ'ըլլիս քղգալի.
Փոմորիկէ ետև, երանի անոր
Ար 'ի ծոց մայրենի՝ կը դանէ անդորր.
Այս, մարդըս պահ մը՝ սէրէն օրորուն
Անոյշ երազներով կը մտնէ 'ի քուն՝
Այլ երբ նա այս քունէն կ'ենէ կ'ըսթափի
Իրաւամբ կը կրկնէ — գտնել սիրուհի՝
Նոր, անկարելի չէ՝ ինձ ամենեին
Սակայն գտնել մայր մը . . . է անհընարին :

—Մարդս ամենէ աւելի իր տարիուհին
կ'սիրէ, և ամենէ աղէկի իր կրնը : Թէ և տար-
փուհի մը ամենէ աւելի և կին մը ամենէ
տղէկ՝ սակայն մայր մը միշտ կ'սիրուի :

Ճ. Բընթառէն

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԵՐ

Բարի մայր մը կ'զուարճանայ իր զաւակ-
ները զուարճացնելու համար, ինչպէս որ ա-
ղաւնի մը իր ստամոքոխն մէջ կ'կակուզցնէ
գարիի հատ մը՝ որով իր ձագերը սնուցա-
նել կ'ուզէ :

Ճ. Ճ. Ռուսոս

— Բնութիւնը՝ ամեն էակներու պահպատահութիւնը մայրական սիրոյ յանձնած է, և մայրերու վարձատրութիւնը ապահովցնելու համար զայն նոյն խոկ այս անոյշ զգացումին հաճոյից և վշտերուն մէջ դրած է:

Շանչօք

— Մայրական սէրը միակ երանութիւնն է որ յուսոյ ամեն խռոտումներէ գեր'ի վերէ:

Տէհն ու Ֆլոհ

— Այս աշխարհիս մէջ մայրն է միակ աստուածը՝ որ ուրացող չունի:

Է. Լեհուլէ

— Արարչագործութեան ամեն կենդանիներու մէջ, շունէն սկսելով մինչև կինը, մայրական սիրութ միշտ վսեմ բան մ'է:

Ա. Տէհուս

ՀԱՅՐԱԿԱՆ ԱԿՐ

Մարդու ամեն տեսակ մոլութիւններ ունի, և ամենէ արիւնուուշտ մոլութիւնները ցոյց կուտայ իր նմաններուն, բայց իր զա-

ւակներուն համար գրեթէ երբէք մոլութիւն
մը չունի, վասն զի մարդկային սեռի պահ~
պանութիւնը ապահովցնելու զելով նախատե~
սող ընութիւնը հայրական սէրը իր որախն
մէջ խորունկ արմատացուցած է և այս դդա~
ցումը շէ թէ առաքինութիւն մը՝ այլ անդի~
մադրելի բնաղդում մ'ըրած է.

Թէ՛ք

ՊՐԵՏՈՆԱԿԱՆ ՍԵՐ

Երիտասարդութեան մէջ պղատոնականու~
թիւնը ծերութեան տրիփս է :

Նիւժն ուն լուսաց

—Երկու սիրահար իրենց յարաբերու~
թեանց մէջ զիրար ամենէ փափուկ զգացում~
ներով վառուած կ'կարծեն : Ամեն տեսակ
նրբութիւններ, չափազանցութիւններ և ա~
մենէ բարձր բնաղանցութեան մը եռանդը՝ ի
կիր կ'առնուն . . . բայց շատ չերթար բնու~
թիւնը էր իրաւունքը ձեռք կ'ձգէ և այն մա~
դէն անցած խօսքերու ցոյցէն իրենց մնապ~

արծութիւնը յագենալէն ետքը՝ սրտին ժա-
մանակ կուտայ զգալու ու իր զգացածը յայտ-
նելու. և նոյն խոկ սիրոյ վայելքները արհաւ-
մարհելու ատեն՝ կու գայ օր մը որ այս մար-
դիկ շատ կ'զարմանան տեսնելով որ երկար շրջա-
նէ մը ետքը գեղացիի մըրածը կ'ընեն, գե-
ղացիի մը՝ որ միամտօրէն գործը պիտի սկսէր
ճիշդ անկէ որ ասոնք լմնցուցեր էին»

Ապա

—Երբ սիրոյ վրայ գեղեցիկ խօսքեր կը
կարդամ, կ'ըսէր տօքթօր Լալման, ուսերս
վեր կ'վերցնեմ. Սէրը սրտին մէջ չէ ամենե-
սին, այլ պարզապէս երկու խլինքայիններու
ձգողութեան մէջ :

Ա. Ռիքոր

Ի Ն Գ Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ինքղինքը սիրող կնիկէ մը շատ սիրուած
ըլլալուգ. վրայ երբէք մի պարծենար:

Պատուան

—Ինքնասիրութիւնը օդով լի փամփուշտ
ունէ որ ծակած ատեղ գ փոխորիկներ կ'հանէ :

Ա. Ռիքոր

— Կիները լաւագոյն ունին որ իրենց ըօ-
պան ճմուես քան թէ իրենց ինքնառիրութիւնը :
Քովետն

ՍԻՐՑ

— Կնոջ մը սիրտը ահողոնդ մ'է որու-
յասակը ոչ ոք տեսած է :
ՏԵՂՅԱ Ը Քաշութէն

— Սիրոյ անզգոյ եղող ւիրտը առաջին
անաստուածք եղած է :
ՄԵՐԵՒԷ

— Կանանց սիրտը այն խաղալիքին տու-
փերուն կ'նմանցնեմ՝ զօրս բացածիդ պէս
աժեն տեսակ և ամեն ձեւ սառանաներ դուրս
կ'թափին :

Ա. ՏԵԽԱ

— Կնոջ մը սիրտը երկնից մէկ մասն է,
բայց երկնքին պէս ալ դիշեր ցորեկ կ'փու-
խուի :

ՊԱՅԵՆ

— Կնոջ սիրտը կ'նմանի այն տեսակ մը

Յառերուն որոնք իրենց սպեղանին միայն
այդ առեն գուրս կ'առան երբ երկաթով մը
խոցուած են :

Եալուսուբեան

ՍԿԻԶԲ

Սիրոյ միայն ոկղրնաւորութիւնը գեղեցիկ
ըլլալուն՝ չեմ զարմանար եթէ ստէպ ոկսելսւ
հաճութիւն կ'զգանք :

Իշխան ու լինել

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

Կին մը բաղդատութեամբ գովելը զին-
քը շահեւու անվրիպելի միջոցն է : Վասն զի-
բաղդատութիւնը իր նախանձն և ինքնա-
հաւասառութիւնը գոհ կ'ընէ :

ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆ

Միայն կնիկէ մը սիրուած ըլլալդ կ'բա-
է ուրիշ շատ կիներէ սիրուելու համար :

Մ Խ Ի Թ Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

— Երիկ մարդը՝ զինքը չոփող մարդուն
դէմ կ'զայրանայ. կիսը զինքը լքողին դէմ
ոչ նուազ աղմուկ կ'հանէ և եղկար ատեն
անմխիթար կ'մնայ :

Լ. Պ. Հ. Յ. Ե. Հ.

— Վիշտերու մէջ գտնուող մէկը միսի-
թարելու աշխատիլը՝ ձեռքէն առնել ուղել
է այս միակ մխիթարութիւնը որ անոր կը
մնայ :

Ո. Շ. Ա. Հ. Յ. Ե. Հ.

Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Սիրոյ մէջ հաստատութիւնը սիրոյ երազն
է :

Ա. Պ. Հ. Յ. Ե. Հ.

— Սիրոյ մէջ եթէ սնհաստատութիւնը
վայելքներ կու տայ՝ միայն հաստատութիւնն
է որ երջանկութիւն կու տայ :

Ա. Բ. Բ. Յ. Ե. Հ.

— Ամենէ աւելի դիւցազնարար հաստա-
տուն կինը կ'հաւանի միայն մէկ մարդու մը

բայց կ' փափաքի որ բոլոր միւս մարդիկ այս բանին համար ցաւերնէն մեռնին
||. Քաբ

— Հա Պրիւլէր ըստած է թէ — Անտարբեր
ապրող մարդը դեռ իր սիրելիք առարկան
չէ տեսած — : Այս խորհրդածութենէ կա-
րելի է հետևյնել թէ՝ հաւատարմութիւն
ցոյց տուող կինը դեռ չէ տեսած այն մար-
դը որ զինքը անհաւատարիմ պիտքնէ :
Երլը Լըդէ

ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Կիները սիրոյ մէջ աւելի եռանդուտ են
քան էրիկ մարդիկ, բայց էրիկ մարդիկ ա-
ւելի եռանդուտ են իրենց բարեկամութեանց
մէջ :

Հա Պրիւլէր

— Որովհետեւ ամեն կիներու արհեստը մի-
և նոյն է, այսինքն գեղասի բլլալ և հաւ-
նուիլ՝ անկարելի է որ երկու կին բարեկամ
ըլլան իրարու, այս բանը միայն ան ատեն կա-
րելի է՝ երբ երկուքն մին տգեղ, պառաւ
կամ վերջապէս կոռութենէ հրաժարած է :

Ան Բրաբեր

Թիթեռնիկ մը բաւական ծոր
Պատսէր երկու
Տատրակներու
Թէ ինք քանի
Թիթեռնուհի
Ժամանակաւ դգւած ունէր :
— Աստուած զկայ,
Կը յարէր նա,
Վկայ Աստուած
Որ միշտ սիրւած
Եի՛ և յար
Զերմ սիրահար :
Աիրուհւյս հետ
Թարմ հստաւէտ
Վարդէ ՚ի վարդ
Ան ի՞նչ զուարժ
Եւ երջանիկ
Կը թռէինք . . . :
Հիմայ չիյտեմ
Ամենքն ի՞նչէն
Խոյս տան գաղտուկ՝
Մինչ ես տաղտուկ
Կ'ոկոիմ ալ
Կեանքէ զգալ,
Այս մեռնէի
Ոզատէի :

Տատրակներն —Մենք,

Բոխն, գիտենք

Ծերութեան մէջ

Արը անչէջ

Պահելու դեղ,

Այն է՝ մէկտեղ

Կալ ցորեկ գշեր,

Ապահով լեր

Որ մենք ասանեկ

Աչա գտանք

Երջանկութեան

Միակ ճամբան,

Մտերմութիւն լաւ է քան զակը
Երբ որ զինքը սէրն է ծներ:

—Երբ երկու կին իրարու հետ կ'ըարեւ
կամաւան՝ միշտ երրորդի մը դէմ դաւ ընեւ
լու համար է :

Ա. Բ. բ.

—Բարեկամի սիրահարուածին պէս՝ իր
կէսէն աւելլին կորուսած ես արդէն:

Տէին ու Սուրբէ

—Նորատի կիներն ալ թագաւորներուն
պէս գժբաղդեն բարեկամութեան մէջ, վասն

զի բարեկամ շունին բնաւ. բայց բարեբաղ-
դաբար կիներն ալ թագաւորներուն պէս ի-
րենց այս դժրազդութիւնը չեն զգար, վասն
զի թագաւորներն իրենց մեծութեամբ և կի-
ներն ալ իրենց մնապարծութեամբ փքացած
են :

Եանֆօր

— Օր մը Ռիվարօլ իր սովորական լե-
զուանութեամբ բարեկամութեան վրայ կ'խօ-
սէր — ինչու համար, պարոն, հարցուց անոր
տիկին մը, կիները էրիկ մարդերու չափ բա-
րեկամ ըլլալու անկարուղ դատեցիք: — Վասն
զի, պատասխանեց Ռիվարօլ, դուք կա-
տարելագործեալ բնութիւնն ըլլալով, ինչ-
պէս որ սէրը կատարելագործեալ բարեկա-
մութիւնն է, դուք ալմիայն ձեզ նման զգա-
ցում մը կրնաք ունենալ:

ԴՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Պարկեշտ կին մը իր էրիկէն պէտք է
գոհ ըլլալ երբ նա զինքը չծեծեր, չյանդի-
մաներ և բանէ մը չղրկեր:

Տէվն ազ Պէտագ

— Աիրուելու պէտքը՝ որու վրայ այսքան
կ'խօսուի՝ իրօք ուրիշ բան չէ բայց եթէ պաշ-
տուելու փափաքը : Տիկին ու նետեր

— Կանանց շատերու երջանկութիւնը զի-
քենք սիրողներու թիւին վրայ կը կայանայ ,
և իրենց փառքը՝ կարելի եղածին չափ ստէպ
զանոնք փոխելուն վրայ : Ուստիւն

— Աէրը միայն սիրով կը վաստկուի : Սի-
րուիլ ուղող անձ մը նախ պէտք է սիրել :
Աւելիս

— Կանայք զմարդիկ իբրև խաղալու թուղ-
թեր նկատելով՝ ժամանակ մը անոնցմով կը
խաղան . և եթէ շահին կը նետեն զանոնք ու
նորերը կը փնտռեն . թէև շատ անգամ հի-
ներով շահածնին նորերով կը կորսնցնեն :
Բոք

— Սիրահարներու իրարմէ չձանձրանալուն
պատճառք միշտ իրարու վրայ խօսելին է :
Լորուկանուն

Սիրահարքն արդի՝
Նման են սեխի,
Յիսուն հատ կարէ՝
Լաւ մ' հաղիւ կերէ : Ա. Ռիտոր

ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ

— ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆը ուրիշի համար պարագուած հարստութիւն մ'է : Պիօն

— Խիստ գեղեցիկ կին մը՝ տարբեր տարբեր աչքերով կը տեսնուի, գեղեցիկ կիները նախանձով կը նսյին անոր, տգեղները հեճուկով, ծէրերը ցաւով, իսկ երիտասարդները խանդով : Տ'Արժանա

— ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆը՝ մագնէտին պէս զօրութիւն մ'ունի որ մահկանացուներու զարմացումը կը շարժէ, և մասնաւորապէս այն սեռին՝ որ ամանի մը պարունակութեան չնայելով՝ միայն անոր աղւոր յախճապակիով մը շինուած ըլլալուն կը նայի : Օրէնսդուքն

— Կին մը իր գեղեցկութեանը համար սիրողը՝ միշտ չ'կընար սիրել, վասն զի ծաղիկի հիւանդութիւնը՝ որ առանց անձը սպաննելու գեղեցկութիւնը կը ջնջէ, իր սէրը պիտի դադրեցնէ անշուշտ : Բաստալ

— Իր գեղեցկութիւնը մեծ արժանիքի տեղ դնող կինը կը յայտնէ թէ աւելի մեծ արժանիք մը չունի : Օքչորդ Լեռնաստ

— Եթէ կանայք իրենց գեղեցկութիւնը
այսքան կը խնամեն, պատճառը աս է որ
մարդիկ միայն անոր համար կ'սիրեն զանոնք :

— Դեղեցկութիւնը այն հոտերուն կ'նմա-
նի որոնց ներգործութիւնը կարճատե է, սու-
վորածիդ պէս՝ ալ հոտը չես առներ :

Տէին Լոհնուէր

— Դեղեցիկ կին մը աշաց արքայութիւնը՝
հոգիին գժոխքը և քսակի քաւարանն է,
Բօբ

— Դեղեցիկ կին մը, սա՞մանագլխի վրայ
գղեկ մը, ճամբու վրայ այդի մ'ունեցողը
երկրի վրայ խաղաղութեան երես շտեմներ :

Ա, ասուն :

Մէկտեղ ճամբայ կ'երթային

երկու տէրտէր մօրուանի

— Աշխարհիս մէջ, կ'ըսէին,

Ո՞րն է արդեօք գեղանի,

Կին սեր մազով կամ եթէ

Դեղին մազով շիկահեր :

— Դեղին կամ սե նոյն բանն է,

Ինչպէս մօրուքն մեզ տէրտէր՝

Մազն ալ կինը չշիներ.

Իմ կարծիքս սա է որ՝

Մարդս հանապազ կը հաւնի
Դրացիինը իբր աղւոր
Եւ իր կինէն գեղանի :
—Թիսերես կինը՝ բուն կին չէ , այլ գէշ
շինուած այր մը : Թէտէրէտ + Թօմաս

—Շիկահերը սէր կը ներշնչէ , սևահերը
ցանկութիւն կը դրդուէ : Ուշական

ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Մարդ մը՝ կին մը կ'սիրէ զանի տեսած ըլ-
լալուն համար և զայն սիրելէ կ'դադրի՝ ա՛լ
շտեսնելուն համար , ինչպէս որ ամեն արդա-
սիք կ'դադրի իր պատճառը դադրելուն պէտ
Տէկն ու Սորներէ

—Բացակայութիւնը սրտի անհաստատու-
թեան թուականն է , շատ անգամ բաժանումի
մ'օրը՝ բարեկամութեան վերջանալուն օրն է :
Տէկն ու Ռէտ

—Կարճ բացակայութիւնները սէրը կ'կեն-
դանացնեն՝ իսկ երկայն բացակայութիւնները
զայն կ'սպանեն : Մէրողութ

—Վերադարձիր , կ'գրէր հակաքը կառան-

եայ կին մը իր սիրահարին, եթէ բացակայ մը
կարենայի սիրել զԱստուած կը սիրէի։
Ռէվարէւ

ՓԱՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ինչ որ կ'ուղեն թող ըսեն, կիներու գլւ-
խաւոր փառասիրութիւնը սէր ներշնչելն է,
իրենց բոլոր հոգը ատ է և կին մը որչափ ալ
հպարտ ըլլայ՝ կ'բերկրի ՚ի ներքուստ իր աշ-
քերուն տարած յաղթանակներուն վրայ։
Մօլէք

ՄԱԶ

Գիտէք այսօր ինչու համար այնքան աղ-
ջիկներ կան որոնց մազերը հովին տնկուած՝
և իրենք կատղած կատուներու կը նմանին,
վասն զի նորելքը՝ որ պղտիկ հոգիներու թա-
գուհին է, կանանց վրայ այնքան իշխանութիւն
ունի որ լաւագոյն ունին անոնք տգեղնալ՝
քան թէ անոր օրէնքներուն չհպատակիլ։
Ա. Ռէվար

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ

Անտարբերութեան մէջ ապրող մարդը ան
է՝ որ գեռ իր սիրելիք կինը չէ տեսած։
Լապտէուէր

— Բանաստեղծ մը՝ որ սաստիկ սիրահա-
րուած էր պարմանուհիի մը, որու սիրով ի-
րենին չէր պատասխաներ՝ հետևեալ տոմնակը
ուղղեց անոր,

Երբ որ Աստուած
Սիրուն Զապէլ,
Միտքը դըրաւ
Զմեզ ստեղծել՝
Զիրք սիրուելու
Տուաւ քեզի՝
Շատ սիրազգայ
Սիրտ մ'ալ ինծի:
Այլ լաւագոյն
Էր անպատճառ
Եթ' իմ սիրտէն
Քիչ մը քեզ տար:
Եւ քու ձիրքէն
Քիչ մը ինծի:

ԱՆՁԳԱՅՈՒԹԻՒՆ

Կան մարդիկ որոնք սիրոյ առջև միշտ ան-
տարբեր ըլլալնին իրենց պատիւ կ'համարին,
ասիկա մարդու մ'իր ապշութեանը վրայ գո-
մը, եւուն կ'նմանին Ասպանին ոը Գասնոս

ՆԱԽԱՆՁ

Նախանձը ուրիշ բան չէ՝ բայց եթէ մարդուս իր սիրածը կամ ոնեցածը պահելու բուռն սէրը՝ կամ թէ արգիլելը՝ որ ուրիշ մէկը չվայելէ ինչ որ մինակը վայելել կ'ուզէ։ Առկէ կը հետեւցնեմ թէ մարդս կրնայ նախանձու ըլլալ իր ամեն սիրած բաներուն համար և իթէ չկրնար բան մը սիրել առանց նախանձելու։

Տէսն ու Սարնօրէ

—Պէտք չենք նախանձիլ նոյն խել երբ նախանձելու պատճառ ունինք։ Լարչնջուած

—Նախանձու էրիկէ մը աւելի անտանելի բան չկայ, բայց չնախանձող էրիկէ մ'ալաւելի ամօթ ալի բան չկայ։ Տէսն ու Ռէես

ՎՎ ։ Կ'կարծուի թէ նախանձը շատ սիրելու նշան է, բայց փորձը կ'հաստատէ թէ ամենէ բուռն սէրը ամենէ քիչ կը կասկածի, նախանձը տկար սէր մը՝ ու տիմոր հոլարտութիւն մը կ'յայտնէ՝ և երբեմն գէշ սիրտ մը։ Մարդերուն նախանձը ինքնասիրութեամբ կ'մնանի միայն, մեր հպարտութենէն նախանձու կ'ըլլանք։ Տէս+ւ

— Սէրը իր վայելքովն ու զայրովթովը
սաստիկ սիրահարուած մարդուն դժոխք է և
արքայութիւն փոփոխակի, նախանձը սիրոյ
քոյրն է ինչպէս որ սատանան ալ հրեշտակին
եղբայրը :

Պատմէլէր

— Նախանձը չէ թէ մեր զգացած սէրէն
յառաջ կու գայ՝ այլ շատ սիրուիլ պահան-
ջելնէս :

Պէտքիսի

— Նախանձոտները արդահատանքի ար-
ժանի են, վասն զի զմեղ տառապեցնելէ ա-
ւելի իրենք կ'տառապին :

Ուշիքորչ

ԿԱՊ, ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ, ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆ

Ինչպէս միևնոյն կրօնքին ամեն քահանա-
ներուն մէջ՝ անանկ ալ բոլոր կանանց մէջ
գաղտնի կապ մը կայ. զիրար կ'ատեն անոնք,
բայց զիրար կ'պաշտպանեն :

Տէրք:

— Միրոյ կապը ամուսնութեան մէջ անանկ
շուտ կ'մաշվի որ շատ չերթար միայն չուվանը
կ'երեայ :

— Աիրոյ մէջ կանանց ըրած առաջին զօհողութիւնները անանկ գրաւներ են որոնց արժէքը իր'նք չեն գիտեր։ Պաշտոն

— Մէկը երջանիկ ընելու համար որչափ զոհողութիւն ընենք՝ այնքան մեղի սիրելի կ'ըլլայ անի՛ և իր մահը մեր երջանկութենէն աւելի բան մը կ'առնէ ձեռքերնէս։

Տէկն ու ներեր

— Համեստութիւնը կանանց համար մեծ առաւելութիւն ունի, գեղեցկութիւնը կ'աւելցնէ և տգեղութիւնը կ'ծածկէ։ Ֆանքնէ

✓ Գեղեցիկ և իմաստուն կին մը գանձ մ'է նաև երբ լոկ շապիկ մ'ունի։ Աւելիա

— Համեստ կին մը հիանալի առարկայ մ'է և (միենոյն նշանակութեամբ) համեստ մարդ մը ծիծաղելի հրէշ մը։ Արու Յովհաննա Տ'Արդի մը աղջիկ չենք տար, աշխարհիս օրէնքները որոնք բարոյութեան օրէնքներէ աւելի զօրաւոր են այսպէս կը պահանջեն։

Բաժնելուն

— Կինը ականջով՝ և չէ թէ աչքով ընտելու է։ Անուան

Գ.Ի.ՏՈՒԹ.Ի.Ի.Ն.

ինչպէս էրիկ մարդերու՝ անանկ ալ կի-
ներու գիտութիւնը կը կայանայ իրենց պաշ-
տօնին մէջ յարմար ուսում մ'առնելու վրայ .
իրենց պարտաւորութեանց տարբերութիւնը
ինչ որ է՝ նոյնը պէտք է ըլլայ իրենց կրթու-
թեան տարբերութիւնը :

Ֆենէլն

—Քիչ անդամ գիտուն մարդ մը համով
կ'ըլլայ՝ այլ գիտուն կին մը՝ երբէք :

Պոլէն

—Քու գիտութեան վրայ սաստիկ համեստ
եղիր, օրիորդ, և մանաւանդ միւս կիներու
առջեւ խնամքով պահէ անանկ բան մը գիտ-
նալդ որ միւսնելը չեն գիտեր :

Տէլին ու Ռիեն

—Կանայք ուսեալ պէտք է ըլլան, բայց
չէ թէ գիտուն :

Օրէնքու ու Լէնքնաս

—Արդէն կնոջ մը համար գիտնական ըլլալը
լաւ յատկութիւն մը չէ՝ և շատ գէշ յատկու-
թիւն մ'է գիտնականութիւն կեղծելը :

Լու Ցօննէն

Զ. Գ. Ա. Յ. Ն. Ո. Խ. Թ. Ի. Ի. Ն.

Առանց վշտի զգայնութիւն չկրնար ըլլալ
և ոչ վայելք առանց զգայութեան :

Կը անունուն

Զ. Գ. Ա. Յ. Ո. Խ. Թ. Ի. Ի. Ն.

— Մէրը աւելի զգայութեան՝ քան թէ ըզ-
գացումներու աստօւածն է :

Տէսդէս

Զ. Գ. Ա. Յ. Ո. Խ. Մ.

— Ինչպէս հազարու և փոնդտալու՝ ա-
նանկ ալ տպաւորութեանցդ չես իշխեր :
Տէսդէս ոչ Տըֆան

ԲԱՃԱՆՈՒՄ

Կի՞ն դու՝ իմ կէմն ես, ամբողջ մը կ'ըլլաս
երք միանաս ինձ .

Ինէ բաժնուե՛, կ'ըլլաս դու մէկ մաս
եւ կամ թէ ոչինչ .

Բաժնուե՛ ինէ, կ'ըլլաս դու ստուեր
Անզօր անկարող :

Միշտ զէրօն էք դուք և մենք ենք թիւեր
Զեզ արժէք տուող :

ԵՐԴՈՒՄ

Երդումները այն կեղծ դրամներն են՝ ուրով սիրոյ զոհողութիւնները կը վճարուին։
Նէսօն ուն Լոնդոն

—Թէ յաւիտենական սէր մը երդմնցողը՝
և թէ այդ երդումներու հաւացողը՝ կ'խա-
բուի, մին իր սրտէն՝ և միւսը իր ինքնահա-
ւանութենէն։ Ս-բանել

—Ընկերութիւնը՝ ամուսնացող կնոջմէն
երդում մը կ'պահանջէ. կինը պէտք է երդ-
նուլ թէ հլու և հաւատարիմ պիտ'ըլլայ իր
էրկան, այսինքն թէ միայն զան պիտի սիրէ
և անոր հնազանդի ամեն բանի մէջ։ Այս
երդումներէ մին անհիմն և միւսը վաստու-
թիւն մ'է։ Կին մ'իր սրտին պատասխանա-
տու չկընար ըլլալ նաև երբ իր էրիկը ամենէ
մեծ և կատարեալ մարդն է։ Ճ. Սան

Աղւոր աղջիկ մը ժամանակաւ լնձի կ'ըսէր,

—Վարդի թերթի մը վըրան

Գրած էի ես մէկ օր,

«Ի՞նչ սիրական որ ինձ տան

'Տի չըսիրեմ իրաւ որ»։

Հաղիւ տողերս լըմնցան
Որ զեփիւռ մը յեղկարծում՝
Շունչովս 'ի մի վայրկեան
Թոցուց թէ վարդ թէ երդում։

Ա. Ռ.

—Երդում չընենք՝ այլ երդում ըրածի
պէս վարուինք։

Ուշբերբը

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Երիկ մարդերու դաստիարակութիւնը՝ կա-
նանց դաստիարակութեամբ պէտք է սկսիլ։
Ժան Պանչեն Սեյ

—Դաստիարակութիւնը մանաւանդ հրա-
պուրիչսեռէն պէտք է սկսիլ, վասն զի գրեթէ
ամեն քաղաքակրթեալ ազգերու մէջ այդ-
սեռն է որ գերութեան երևոյթով տիրող
սեռին կ'հրամայէ։

Մէրապէ

—Մարդ մը կրթել՝ անհատ մը շինել է,
որ իրմէ ետքը բան մը չթողուր, կին մը կըր-
թելը ապագայ սերունդները շինել է։

Լուսնը

—Կանանց սորվեցուցած միակ բաներնիս
իրենց նախամօրմէն ընդունած թղենիի տերեւ

աղէկ կրելն է։ Տասն և ութ տասն և ինը տա-
րուան հասակնուն մէջ իրենց կրկնածնիս ասոր
վրայ կ'կայանայ —Աղջիկս թզենիի տերեխդ-
աղէկ հոգ տար, թզենիի տերեդ աղէկ կ'եր-
թայ կոր, թզենիի տերեդ գէշ կ'երթայ կոր։

Տէրը

—Հեղինակութեան եռեէ եղոզ կիները՝
աւելի աղէկ կ'ընէին եթէ բան բանէին։

Ա. Պատիւըն

—Հեղինակ կին մը երկու գէշութիւն
կ'ընէ . թէ գիրքերու թիւը կ'աւելցնէ՝ և թէ
կիներու թիւը կ'պակսեցնէ։

Ա. Քար

ԽԵԼԱՑՈՒԹԻՒՆ

Գեղեցկութիւնը միշտ սէր յառաջ չըերեր՝
և կրնայ ցուրտ ոքանչացում մը յառաջ բե-
րել, բայց ախորժելի դէմքի մը հետ խելա-
ցութիւնը անվրիպելի ներգործութիւն մ'ունի։

Տէրէլ

—Գեղեցիկ կին մ'ունեցողը՝ լոկ գեղեցիկ
կին մ'ունի, իսկ խելացի կին մ'ունեցողը՝
մէկ կնիկով՝ շատ մը սիրուն կիներ ունի։

Լ. Պօդել

— Հարիւր մարդու մէջ երկու խելացի կը
դժնես, հարիւր կնիկի մէջ մէկ տխմար. հա-
մեմատութիւնն աս է: Տէին ոռ ծէրարգէն

— Ամեն տաղանդ կամ հանճար ունեցող
մարդ որ փառքի հասնելու սահմանուած է:
պէտք չէ ամուսնանալ: Ամուսնութիւնը ամեն
մեծ ու զսեմ բաներու մարիչ գործիքն է:
Օրէութ լ'էբինաս:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆ

Վ Կիները՝ զիրենք շողոքորթող ճշմարտու-
թիւն մը մէկէն կը կլնեն, իսկ իրենց նկատ-
մամբ դառն ճշմարտութիւն մը՝ կաթիլ առ
կաթիլ:

Տէպէտ

Ա. Ց Բ Ւ

Վ Ամենէ խոհեմ այրի կինը՝ կրկին ամուսնա-
նալու չափ խենթ է:

Լու Շոտ

— Նորատի այրիի մը արցունքը իրդառ-
նութիւնը կ'կորուսնէ սիրոյ ձեռքը զայն սըր-
բելուն պէս:

* * *

— Այրի ըլլալը դիւրին չէ, կ'ըսէր ինձ
ժամանակաւ կին մը, վասն զի նորատի աղջ-

կան մը համեստութիւնը կեղծելու է՝ առանց
անոր բոլոր անմեղութիւնը կեղծել կարենա-
լու. Տիկն ու Ժերարդին

կու լայ կողբայ մեր Աննան
Զի մնաց որբ . . . և այրի,
Այլ մի խարսուիր, բարեկամ,
Կինը փայտ մ'է գալարի՝
Որ մէկ ծայրէն երբ կու լայ
Միւսը տրիսփով կը վառի :

Ա. Ռիտոր

ԿԵՍՆՔ, ԾԵՐՈՒԽԻ ԵՒ ԾԵՐՈՒԹԻՒՆ

Կիներու կեանքը՝ եզկար հիւանդութիւն մ'է :
Մարտէս

— Կեանքը ծաղիկ մ'է՝ ուսէրն իր մեղրը :
Վ. Հիակ

— Սէրը՝ ծաղիկ հիւանդութեան պէս՝ որ-
քան ուշ գայ՝ այնքան վտանգաւոր է :
Պիւսի Ուսուկնուն

— Ծեր մարդերու սիրահարութեան մէջ
ծիծաղելի եղածը ոա է որ՝ սնոնք նաև սէր
ներշնչել կուզեն :

Օրեւրու ու Լեսբիոս

— Հարուստ ըլլալուն համար ծեր մարդու

մը հետ ամուսնանալը՝ շատ անդամ մեր հանչ
գիտն ու առողջութիւնը վտանգի դնել է:
Երեակայէ ծերուկ մը որ կ'հազայ, կ'թքնէ,
քթախոտ կը քաշէ, և կը համարձակի նաև
նախանձոտ ըլլալ՝ առանց ուրիշ բանի ալ յար-
մար ըլլալու: Այդ ի՞նչ համով կերակուր է
նորատի կնոջ մը համար: Բայց ամեն բան
ըսենք, կան նաև երեսուն տարեկան մարդիկ
որ նոյնալէս ծեր են և ստէպ աւելի նեղիչ.
անոնց հետ սա դէշութիւնն ալ կայ որ՝ շուտով
այրի մնալու յոյս ալ չենք կրնար ունենալ:

Տէղն ու Ռէկ:

— Արդէն ծեր մորդ մը՝ երբ կը համար-
ձակի դեռահաս կին մ'առնուլ՝ անվրէպ պէտք
է կուրութեան, խլութեան ապաւինի՝ եթէ
ոչ փիլիսոփիայութեան: Տէղն ու Սօնրէ

— Եթէ եղջերուի մը տարիքը իր եղջիւր-
ներէն կ'համրուի, ծեր ֆեսայ մը՝ այդ սովո-
րութիւնը կը փոխէ, այնալէս որ իր տարի-
քէն իր եղջիւրները կը համրուին: * * *

— Ծերունիները միշտ նախանձոտ ըլլալով՝
կ'նմանին այն որկրամուլ տղոց՝ որ անպատ-
ճառ ամեն բան միայն իրենց պահել կ'ուզեն՝
մինչև անդամ այն կարկանդակները՝ զորս
չեն կրնար ուտել:

Ա. Ո.

— Ծերունիները աղէկ խրատ տալ կը սի-
րեն, ալ դէշ օրինակներ տալ չկրնալնուն
վրայ մխիթարուելու համար : Ա. Տէ-բէ

— Բնութիւնը՝ ծերերուն շատ դիւրաւ դոհ
ընելիք սէր մը ձգած է, այն է . . . հանգո-
տութեան սէրը :

— Աւելի վասնգաւոր է պառաւ մը բար-
կացնելը՝ քան թէ շուն մը : Անօտէ

— Քիչեր ծեր ըլլալ դիտեն :
Տէկն ու լահուկը

— Պառաւութիւնը դժոխք է այն կիներու
համար՝ որ իրենց գեղեցկութենէ ուրիշ յատ-
կութիւն չունին : Սէր—Եկեղէն

իր ծերութիւնը չճանշող ծերը նուազ
ծեր է :

ՍՈՎՐՈՒԹԻՒՆ

— Սէրը սովորութեամբ կ'թափանցէ որտին
մէջ և սովորութեամբ կ'ելնէ անկէ : Օվակն

— Սիրելու սովորութիւնը դիւրաւ կ'առ-
նուի՝ և դժուարաւ կը մոռցուի :
Տէկն ո՛վրահմէն

ԱՌՈՒԹԻՒՆՆ

Լոռութիւնը կնիկին տրուած է իր խոր-
հուրդները աւելի աղէկ բացատրելու համար։
1. ՏԵԽԱՅԵ

—Երբ աղջիկները ամուսնանալու տարի-
քին մէջն են՝ իրենց լուռթեամբն իսկ էրիկ
մը կ'ուզեն։

ՊԱՐԶՈՒԹԻՒՆՆ

Պարզասիրութիւնը ազնիւ պճնասիրու-
թիւն մ'է։ * * *

—Ինչու առ աստիճանի պարզութեամբ
կը հագուիք, կ'հարցնէր ՞ տիկնոջ ու-
րեշ նորատի կին մը որ թէ իր անվայել բար-
քով և թէ զուգսով ճանչցուած էր, —Ո-
րովհետև միակ էրիկ մ'ունիմ, պատասխա-
նեց տիկին ՞ Ա. Ա.

ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆՆ

Ընդհանրապէս աղջկանց համեստութեան
պահապանը հպարտութիւնը դրուած է, բայց
երբ առաքինութիւն մը մոլութեամբ մը պա-
հուի՝ դիւրին է պահակը կաշառել։ * * *

ՀԱՄԵՍՈՒԹԻՒՆ

Կիները և ոչ մէկ բանի մէջ պէտք են
մերկ ըլլալ, իրենց խելացութիւնն անդամ
պէտք է համեստութեան քօղով սքօղեալ
ըլլայ:

Եսանի

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Կնոջ ամենէ քիչ ՚ի դործ դրած առաւ-
քինութիւնը հնազանդութիւնն է, հաւանո-
րէն՝ օրէնքը հնազանդութիւն պահանջելուն
համար :

Հ Ռէսն

ԱՌԴԻԹ

Ամեն սատանաներէն աւելի չարը և ա-
մեն կիները փորձողը՝ Առիթ կոչուած սա-
տանան է :

Առաջնորդ

ԳՈՐԾ ԵՒ ԶԲԱՂՄՈՒՆՔ

Սէրը պարապորդներու զբաղումն է :

Դիմուննեն

— Կիներու ամենէ յարմար զբաղմունք-
ներն անոնք են որ զանոնք քիչ անդամ
դուրս ենելու կը պարտաւորման :

Հայոց Տէսուսու

— Պարապորդ մարդը քնացող ջուրի նման
է կ'առականի : Ա. Ա. Ե. Հ.

— Բարի կին մը երբէք պարապ չնատիր :
Ա. Ա. Ե. Հ.

— Աստուած աշխատութիւնը տուած է
իրրե առաքինութեան պահապան : Ա. Ա. Ե. Հ.

Սիրոյ գործերուն մէջ անմեղութենէն մեղ-
քի մտնելու համար համբոյը մը կը բաւէ :
Ա. Ա. Ե. Հ.

— Կանանց շատ չվայլեր գործերու խառ-
նուիլ, վասն զի ոչ կրնան՝ և ոչպէտք են է-
րիկ մարդերը բաւական ճանչել :
Տ. Ա. Բ. Ա. Ե. Հ.

— Կիները միայն իրենց տունին նիւթա-
կան կառավարութեան մէջ փակել, միայն
ասոր համար կրթելը՝ մոռնալ է որ մէն մի
քաղաքացիի տունէն կ'ելնեն զաշխարհ կա-
ռավարող սխալներն ու նախապաշարումները :
Ե. Ա. Ա. Ա. Ե. Հ.

Ա. Ա. Ա. Ք. Ի. Ե. Ա. Խ. Թ. Ի. Ի. Ն.

Ամենէ առաքինին այն կինն է որու վրայ
նուադ կը խօսուի : Թ. Ա. Ա. Ե. Հ.

— ՀԵՆՐԻ Դ. սաստիկ սիրահարած ըլլա-
լով Քաթէրին տը ՌԻԾԱՆ անուն օրիորդին՝
որ թագուհիին պատուոյ տիկիններէն մէկն
էր, իրկուն մը դաղտնի կերպով անոր հար-
ցուց թէ ո՞ր կողմէն անոր սենեակը կ'եր-
թուէր, — Եկեղեցիէն, Վեհափառ տէր, պա-
տասխանեց առաքինի օրիորդը :

Այս պատասխանը յիշեցէք, աղջիկներ, և
եթէ առիթը պատահի օգուտ քաղեցէք ան-
կէ:

Ա.Բ.Բ-ոյ ՊԼՈՒՂՄ

— Կանանց մէջ առաքինութեան շատ քա-
ռոզիչ՝ բայց քիչ նահատակ կայ :

Նինժն ուն Լոնդոն

ԽԱՂ

Կանայք նախ սէրը մեծ գործի մը տեղ
կը դնեն, բայց շուտով անոր հետ կ'ընտա-
նենան և խաղ մը կը դարձնեն զայն :

ՌԻԶՈՒՔԻՆ

Խաղամուներու համար իր տունը բացող
կինը շատ արհեստներ ընելու ճամբուն մէջ է :

ՏԵ-ՔԼ

Խաղամուլ կնոջ մը վրայ առաքինութիւնը

դիպուածի մ' արդասիքն է, եօթնոցի մը տեղ
ասօ մը :

ՇԱՀ

Երիտասարդ անձի մը սրտին մէջ չկընար
գտնուիլ երբէք այնպիսի բուռն սէր մը՝ ո-
րու վրայ շահն ու փառասիրութիւնը բան մը
չաւելցընէ : Լ. Պէտյեր

— Սովորապէս գեղեցիկ կիները համակ-
րութենէ կը սիրենք, տգեղները շահու հա-
մար, և առաքինիները դատողութիւնով :

Ա. Տ.

ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Կիները դատելու է մուճակներէ սկսեալ
մինչև խոյրը դրեթէ ինչպէս որ ձուկը կը չա-
փեն պոչին և գլխին մէջ տեղը հաշուելով : Լ. Պէտյեր

— Եթէ սէրը իր յառաջբերած արդիւնք-
ներու վրայ դատենք, կը տեսնենք որ աւե-
լի ատելութեան քան բարեկամութեան կը
նմանի :

Լ. Բոշնակ

— Կանանց մեծ մասն էրիկ մարդը իր հա-
գուստէն կը դատէ, ինչպէս որ տիմար մը
պտուղը իր փեճելէն : Ֆ. աը Վ. բէն

— Կին մը՝ իր հաղուելու կերպէն կը դաշտուի, իր զուգսի այլանդակութենէ կը հասկցուի՝ իր վարուց այլանդակութիւնը :

* * *

ՆԱՄԱԿ

Սիրահար մը՝ որ այս անունին անարժան էք՝ կսպառնար իր սիրուհին անորմէ ստացած նամակները հրատարակել, — Կրնաք զանոնք հրատարակել, պարոն, բսաւ օրիորդը, մինակ անոնց վրայ դրած հասցէիս համար պիտ' ամչնամ:

Ա. Ռ.

Թէ հասկընայիր ի՞նչ է մի նամակ՝
Նամակ մը սիրոյ, սիրանիշ տողով.
Տասնըհինգ տարու եղած ժամանակ,
Ի՞ունենայ անի բաւական ատեն
Ետք գօտիի տակ՝ ետքը՝ ի դրան
Մինչ որ գզրոցին կարգը գայ վերջէն:
Ո՞հ, իսչպէս զանի՝ մենէ անբաժան
Ըրած մեղ ընկեր ի հանդէս՝ ի կառ
Կը ժուռ ածենք միշտ. քանի հեղ ճամբան
Դրաննուս մեջը, խանդով սիրավառ
Կը գգուենք սիրով: Պարզմիտ հօրվրան
Քը թերնուս տակէն ի՞նչքան կը խնդանք
Որ բան մը չտեսներ, ի բնէ անտի,

Ամենքնուռ նախնիք էին միշտ ասանկ
Այն ազգութիւն գլուխերն ո՞րքան են բելրի։
Ա. Պ. Միսուկ

Գիրք

Կիները աւելի ախորժանօք կը կարդան
այն գիրքերը որ զիրենք կ'զբացնեն՝ քան
թէ զանոնք որ իրենց բան կը սորվեցնեն, և
սովորապէս աւելի հաճութեամբ հեշտութեան
դպրոցը կը վաղեն՝ քան իմաստութեան։

Տէւ Պէտք

— Ընտիր գիրք մը և ընտիր կին մը՝ շատ
թերութիւններ կ'ուզզեն։ գէշ գիրք մը և
գէշ կին մը շատ սրտեր կ'ապականեն, կան
մարդիկ որ այս երկու պարագաներու մէջ
ալ միայն կազմին կը նային հետեաբար ի-
րաւունք չունին գանդատելու երբ կ'ուեսնեն
որ խաբուեր են։

Յ. Պ. Վարան

— Զգել որ կին մը իր խելքին ընտրած
գիրքերը կարդայ, վառօդանոցի մէջ կայծ մը
ձգելու կը նմանի, ատորմէ ալ գէշ է. ա-
տանկով կինդ կը վարժեցնես քենէ հրաժա-
րելով՝ երեակայական աշխարհի մը՝ արքա-
յութեան մը մէջ ապրելու։ Վան զի կանանց

կարդացածը ինչ է : Տրվուտ գրքեր, Ռուսոյի խոստովանանքը կամ թէ վէպեր որոնք ամենէ աղջու կերպով իրենց զգայնութեան վրայ կը ներգործեն : Կիները ոչ բանավարութիւնը և ոչ հասուն պտուզները կը սիրեն :

Պլանտ

ԲԺԻՇԿ

կրիկ մարդիկ բժիշկը կը կանչեն երբ հիւանդանան, կիները բժիշկը կը կանչեն ամեն անդամ՝ որ ինչ ընելիքնին չդիտնալով կը ձանձրանան :

Տն. Ժանլէ

ՅԱՄԲԱՍԱՆՔ

Եատ կիներ աւելի աղէկ ունին որ քիչ մը իրենց առաքինութիւնը բամբասուի՝ քանի իրենց խելացութիւնը կամ գեղեցկութիւնը՝ Ֆանինել

— Կին մը երբէք դատելու չէ ուրիշ կը-նոջ մը տուած տեղեկութեանց վրայ, վասն զի գրեթէ ամեն կիները այնպէս կարծելու տկարութիւնն ունին որ՝ իրենց կը մնայ այն փառքը կամ ընտիր յատկութիւնը զոր միւս-ներուն կը զլանան :

Տն. Դը Ասրնօրէ

Օր մը սէրը բամբասեցի, անալ զիս պատ-

ելու համար Հիմէնի աստուածը ինձ զըրեց. կարգուեցայ անկէ ՚ի վեր մինակ վիշով կ'ապրիմ։

ՈՒՅՈՒՆ

ՏԻՐՈՒԹԻՒՆ

Դէղ բնութեամբ և տիսրադէմ կիները ալպաթրէ ամաններու կը նմանին որոնց մէջ քացախ կը պահուի։

Դէպէնէն

— Օր մը Պէն — Սարա ռարունապետին կը հարցնէին թէ՝ մարդ պէտք էր չար կին մը առած ատեն բաժեռուիլ անորմէ, — Եթէ ու կոր մը բաժին բնկած է ձեզ, կրծեցէք զանի, պատասխանեց փիլիսոփան։

Ա. Ռ.

— Երբ չար կին մը առած ես, ամենէ աղէկը ան է որ երթաս հորի մը մէջ նետուիս գլուխվայր։

Մուշտիկ

— Կնոջ ամենէ վնասակար անգամը իր լեզուն է։

Ա. Ռ.

— Գէշ կին մ'առնողը քաւարանը իրեն դրացի ունի։

Ա. Ռ.

— Ենորհքը ու գեղեցկութիւնը անթափանցելի քօղ մ'է, որով բնութիւնը ամենէ դարշելի հոգիները կը ծածկէ։

Ա. Ռ.

— Կիներու փոթորիկէ խոյս տալու համար բարի կնոջ մը հետ ամուսնութիւնը լաւ նաւահանգիստ մ'է, այլ չար կնիկի մը հետ ամուսնանալը՝ նաւահանգստին մէջ փոթորիկ մը : Ժ. Շենք-Աքն

— Թվ որ իր ամուսնութեան երկրորդ օրը կը տեսնէ թէ չար կնիկի մը հետ կարգուեր է օր մը ևս սպասել պէտք չէ զանի աւելի բարի ընելու համար : « Դալար փայտը ուզածիդ պէս կրնաս ծռել, կըսէ Սաստի բանաստեղծը, բայց չոր փայտը մինակ կրակով կ'ուղղուի : Ա. Աքուար

ԹԵՇԹԵՒՈՒԹԻՒՆ

Փետուրէ թեթե բնչ կայ — փոշի,
ի՞նչ կայ փոշիէ թեթե — հով
Հովէ թեթե — կի՞ն :

* * *

— Կանանց թեթեութիւնը ծանր հետեւութիւններ ունի, այսինքն գոյութիւն չունեցող յանցանքներ ենթադրել կու տայ :

Լապուհ

ԱՊԵՐԱԽՑՈՒԹԻՒՆ

Սիրոյ մէջ էրիկ մարդերու ապերախտու-

թիւնը դրեթէ միշտ մեր ըրած չնորհքներու
մրցանակն է :

Նիւճ ոռ Լանգիւ

ԿՈՐԱՒՍ

Կիները և հաւերը շատ թափառելէ կը կոր-
սուին :

Առաջ

— Շատ կիներու պատիւը աղարտողը՝ ան-
կարելութիւնն է, էրիկներու պաշտպան աս-
տուածը աս է :

* * *

ՄԵՂԻ

Մարդ մը որքան ալ սուրբ և առաքինի
ըլլայ՝ մեղաւոր ըլլալու հրապոյրներէ երբեմն
կը դրդուի :

Օժոէնսիէկրն

— Լը Թամիւս կարդինալը օր մը եկեղեց-
ւոյն մէջ տամներորդ պատուիրանքին վրայ
քարող տալով կ'ըսէր — Այս, սիրելի եղբարք
իմ, մարմինի մեղքը ամեն մեղքերէ դարշե-
լին է, և այս ըսածս այնքան իրաւ է որ իմ
մասիս լաւագոյն կը համարիմ, սպաննել,
դողնալ, հայհոյել՝ քան թէ այդ մեղքը դոր-
ձել, — Է՛հ, շատ եղաւ, հայր սուրբ, պո-
ռաց ունկնդիրներէ մէկը : — Զէ՛, պարոն,
չէ, պատասխանեց կարդինալը սոյն պարոնին
դառնալով, վասն զի այդ մեղքը ամենամեծ

մեղք մ՞ըլլալը անկէ յայտնի է որ չկմնար
կատարուիլ այն առանց երկու հոգի ըլլալու :
Ա. Ու.

—Աստուծոյ սիրուն զիս հանդիսատ թող,
կ'ըսէր տամնըօրս տարեկան օրիորդ մը ծե-
րուկ կնամոլի մը՝ որ զինքը համբուրել կ'ու-
ղէր — Ո՛հ, այդքան մի բարեկանար սիրուն
աղջիկս, կրկնեց ծերուկը, այս տարիքիս մէջ
դու ինքնին զիս կընառ զրկել առանց մեզք
մտնելու : — Ի՛նչ, առանց մեղք մանելո՞ւ,
բայց ճիշդ ատոր համար ես ալ չեմ ուզեց
որ զիս համբուրես, պատասխանեց չարաճճին :
Ա. Ու.

Աղուոր տիկին մը, երէցի մը հետ՝
երէց ըսուածն է պզտիկ վարդապետ .
Ունենալով խիստ սերտ մտերմութիւն՝
Չորս հիսդ զաւկի տէր էր եղած սիրուն,
Այնպէսոր էրիկն՝ յուսհատ ձանձրացած՝
Դարձաւ ու ըսաւ մէկ գիշեր յանկարծ
—Աս ի՛նչ է կնիկ, աս որքան լամուկ
Տուն չէ աս՝ դժոխք, ի՛նչ ծախքու աղմուկ,
Դու ալ գիտես որ ես բընաւ զաւակ
Չուննալու համար՝ որքան ժամանակ
Հոգ ու փոյթ տարի . . . վայ եկառ գըլխուս
—Այո՛, բարեկամ, այլ անտարակոյս,

Աստուած ալդ մեղքը պատժելու համար
Մեղ այդքան զաւակ կու տայ անդադար ։
Պիտուանուաբ

ՎԻՇՏ

Սիրոյ այնքան վիշտ պատճառելը ուրիշ
բան չէ՝ բայց եթէ շատ անգամ մեր սիրոյ
տռարկային սիրուելու արժանի չըլլալը ։
Տն. Ռէտունէ

— Սիրահարները նոյն խակ իրենց միտքը
չարչըող անհանգստութեանց մէջ անպատմե-
րի հաճութիւններ կ'զգան, և շատ անգամ սի-
րոյ վրայ խօսուելու ատեն՝ իրաւամբ ըսուած
է, թէ միւս ամեն զուարճութիւնները անոր
վշտերու չափ արժէք չունին ։
Պատանէն

ՈՒՐԱԽՈՂԻԹԻԿՆ

Սիրուելու ամենէ մեծ գաղտնիքներէ մէ-
կը հաճելի ըլլալ և զուարճացնելն է, սիրտը՝
որքան լացով այնքան ալ ուրախութեամբ
կը կակուղնայ ։
Տն. ու Սուներէ

— Ուրախութիւնը կնոջ մը որտին մէջ խօ-
թելով է որ սէրն ալ կրնանք մուծանել ։
Ա. Տէբէոյ

ԲԱՐԱՐԻԹԻՒՆ

Կանայք էրիկ մարդերէ աւելի բարկացոսն
են։ Ամենէ տկար հոգիները աւելի դիւրաւ
կը զայրանան, վասն զի իրենց տկարութեան
համեմատութեամբ տեղի կու տան անօր։

ՊԼՈՅՊՈՅԻՉԱՆ

— Սիրահարներու բարկութիւնը ամառաւ
ուան փոթորիկներու կը նմանին որո՞նք ուրիշ
բան չեն ըսեր բայց եթէ դաշտերը աւելի
գեղեցկացնել ու զարդարել։ Տն. Ներեւ

ԱԳԱՀՈՒԹԻՒՆ

Սէրը աւելի առատաձեռնութիւն՝ քանիթէ
ադահութիւն յառաջ կը բերէ։

ՕՐԵՆՔՆ ՍԻՆ-ԴԵՐԵ

— Ս.քառօն բանահիւոք իր մէկ կծծի աղ-
գականուհիին վրայ հետադայ քառեակը շի-
նեց։

Անցորդ, աստ հանգչի, նա որ
Միշտ առնելու էր սովոր
եւ որ լաւ ընտրեց մեռնել
Քան առած դրեխն ետ վախել

— Աւրիշ բանաստեղծ մը՝ այս քառեակը
չինեց իր հօրաքոյրերէ մէկուն համար որ
նոյն թերութիւնն ունէր :

Ճոխ եկամուտ թէպէտ ունէր
իր կտակով տէկին Սուրբիկ
Խնայելով լոկ մէկ շապիկ՝
Մերկ թաղուելու տուաւ պատուէր :

ԳՈՂՈՒԹԻԻՆ

Սիրոյ մէջ գողութիւնը՝ Լակեդեմօնաց-
ւոց գողութեան կը Դմանի . միայն ճարպիկ
չեղողները կը բռնուին :

— Սիրահար մը՝ Երքեմն սա աղէկութիւ-
նը կ'ունենայ որ մենէ գողցած կնոջը ձեռ-
քէն զմեզ կ'ազատէ : Ա. Ոչոր

V — Ամեն կին՝ ուրիշ կնոջ մը համար ու-
նեցած սէրդ իրմէ եղած գողութիւն մը կը
համարի :

ՈՐԿՐԱՄՈՒՈՒԹԻԻՆ

V Որկրամու կին մը միշտ բազմատեսակ ա-
խորժակներ ունի : Անրիծ մնալու համար, ը-
սաւ Սթօպէ, սակաւապէտ պէտք է ըլլալ : Որ-
կրամութիւնը զգայութիւնները կը գոգոէ
և բղջախոհութիւնը կը գոհացնէ զանոնք :

Ա ԲՈՅՈՒՀՈՒԹԻՒՆ

Շատ կիներ վայելելը՝ միշտ ուրիշի մը
կնոջ համար ցանկութիւն ունենալու չարգի-
լեր, բղջախոհութիւնը ագահութեան նման
է, գանձերդ որքան շատնան այնքան աւել-
ցընելու կ'աշխատիս :

Մռնեսին

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Ա Հարուստ կին մը լիրը չարիք մ'է : *Ա*
Ճէ-Հէնու

— Կին մը՝ բնաւ ամենելին չսիրեր տռանց
ենթակային ծանօթութեան : Մարդ մը՝ կամ՝
շնորհքով՝ կամմտացի՝ և կամ հարուստ պէտք
է ըլլալ սիրուելու համար: Շնորհքով մարդ մը
շատ կիներու հաճելի է, խելացին՝ բազմա-
թիւ կիներու՝ իոկ հարուստը՝ ամենուն: Կա-
նայք բան մը տալ չսիրող հարուստը չեն սի-
րեր երբէք և կ'արհամարհեն արժանիք ունե-
ցող մարդը՝ որ բան մը չկրնար տալ. կանանց
համար օգտակարն ախորժելիէն աւելի նախա-
մեծար է՝ և Բլօթի խենէշին պէս՝ անոնց աչ-
քը ձեռքերնունվրայ է:

Աւշտէն

Կընսոսի ճոխութեանց
 Չունիմ երբէք ես նախանձ .
 Աւելորդ են այդ դանձեր,
 Ոսկի արծաթ չեն ըներ ,
 Սիրելիդ իմ Սալթինիկ ,
 Կետնքն աւելի երջանիկ .
 Երբ Բագոսը խինդ դէմքով
 Հանդիսի մէջ դայ իմ քով
 Ու իմ գլխին պսակ ծաղկէ;
 Չուարթօրէն երբ հիւսէ՝
 Ա՛լ լինչ կ'ուզեմ աւելի .
 Խենթ է ով որ կը խորհի
 Թէ սոսոյգ չէ ապագան
 Նախ վայելենք մենք ներկան ,
 Վաղ ապրելիքն ով գիտէ .
 Կետնքդ բոլոր նուիրէ
 Սիրելու երբ Պարկայք դեռ
 Հաճին մանել քաղցր օրեր ,
 Քան զի մահու դառն ժամ
 Խղէ զանոնք տարաժամ :

Անութեան

ԱՂԻԱՏՈՒԹԻՒՆ

Դեղեցիկ ծնած կինմը բոլորովին աղքատ չէ :

— Հարստութիւնը սէրը կը սնուցանէ բոյց

տղքատութիւնը դայն ապրեցնելու միջոցներ
չունի։

Օքտոբ

—Սէրը թշուառներէ հեռի կը փախի,
հարստութիւնը կը սիրէ՝ առանց անոր ևս ա-
ւելի հաւատարիմ մնալու, որքան տեսած
ենք որ հարստութեան հետ ան ալ թոփ
երթայ իր վառած սրտերուն մէջ ուրիշ բան
չձգելով՝ բայց եթէ չափազանց շատ սիրած
ըլլալու յուստհատութիւնը։

—Մարկոս, ագարակին մարդերէն ով կը
կարգուի այսօր, կ'հարցնէր օր մը Պ. Պ. տես-
նելով որ նորասի գեղջուկ մ'իր նշանածին հետ
եկեղեցիէն հանդիսով գուրս կ'ենէին երկուքն
ոլ շատ աղքատութեամբ հագուած, —Պարոն,
պատասխանեց սմսեղուկ Մարկոսը, անօթու-
թիւնը ծարաւին հետ կը սրակուի կոր։

Ա. Ո.

ՀԻՒԱՆԻՈՒԹԻՒՆ

Կան շատ կիներ որոնք ինքզինքնին հի-
ւանդ կը կարծեն վաթսուն տարեկան հա-
սակնուն մէջ գոյներնին իր թարմութիւնը կո-
րուսած ըլլալուն համար։

Մէյլան

—Սիրոյ կիրքը լաւ հասկնալու համար ա-
նոր վրայ խօսելու է հիւանդութեան մը վրայ

խօսելու պէս, երբեմն աս ճամբով է որ բոյժ
կը դանուի :

Անապատ

— Սէրք հիւանդութիւն մ'է՝ որ իրմէ ու-
րիշ բժիշկ չուզեր :

Բրոբեր

— Ծաղկի հիւանդութիւնը կանանց հա-
մար Վաթերլօյի պատերազմն է, երկրորդ օ-
րք զիրենք իրօք սիրողը կը ճանչեն։ Պարագա

— Բարիզցի վաճառական մը՝ որ Նորման-
տիայի մէջ պատռական մարդագետիններ
ունէր՝ օր մը խռոված իր կնոջ քով երթա-
լով ըստ, — Սիրելիս, լրագիրները կը ծա-
նուցանեն թէ ոոյն միջոցիս խիստ ծանր հի-
ւանդութիւն մը կայ եղջերաւոր կենդանի-
ներու մէջ։ — Տէր Աստուած, ի՞նչ կ'ըսես .
. . . Մրկօ՛, Մրկօ՛ : — Հրամայեցէք, տիկին :
— Ենւտ, շնորհ, բժիշկը դնաւ կանչէ : — Ին-
չու համար, հարցուց էրիկը բոլորովին զար-
մացած : — Ի՞նչ ըսել է ինչու համար, բժիշ-
կը կանչենք՝ որպէս զի շըլլայ թէ հիւանդու-
թիւնը քեզի ալ անցնի, պատասխանեց տի-
կինը :

Ա. Ա.

ԿՈՒԻՖ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԻՒՆ

Հովս ինչ որ է կրակին համար՝ նոյն է
կոխը սիրոյ համար :

Լինել

— էրիկ կնիկի կոխւներու համար է որ
ճշմարտութեամբ կրնայ ըսուիլ անհամածայ-
նութենէ համաձայնութիւն կը ծագի, վասն
զի այդ կոխւները վայելքի կը փոխուին և
սէրը կը կրկնապատկեն։ Շուէ ու լ Փերեկեր

Որբեարի մը յիսունամեայ
Կ'ըսէր մէկ օր
իր կնքամօր,
— «Ճունս լեցուն ամեն բան կայ»

«Առատ պաշար և գինի հին
Կ'ը յուսամ դեռ
«Ես օր տեսնել.
«Եթէ սակայն շնորհիւ քուկին,

«Դոնեմ մարդ մը՝ ինձի յարմար՝
«Որ ինձ էրիկ
«Բլլայ, քուրիկ
«Միայն նայէ, քիչ մը հոգ տար

«Քաղցրաբարոյ բլլայ և հեզ
«Ինձ չէ թէ այր
«Այլ մէկ եղբայր
«Պէտքէ, միտքս՝ ինչ է... գիտես...»

— Հա, ըսաւ միւսն, յարմար առիթ,
«Զեռքիս տակ կայ

« Շնորհքով վիճակ
» Մ'որ թէ լաւ է թէ նրբամիտ :

« Այլ իր նմանն ստեղծելու⁵
« Զուրկ է պատւէն,
« Աս ալ կարծեմ
« Վնաս չունի, հոգդ չէ քու » :

Պատախանեց յիսունամեան.
— Ի՞նչպէս ատի
« Վքհաս չունի .
« Բուն իսկ ան է ինձ պէտքական .

Վաղը եթէ դժբաղդաբար
« Մէջերնիս մէկ
« Կռիւ ընենք
« Ո՞վ ալիս՝ ըլլայ մեր հաշտարար :

— Եկը կ'աւելնայ ամեն անգամ՝ որ եր-
կու սիրահարներու մէջ հաշտութիւն մը տե-
ղի կ'ունենայ : Տէին ու Սուրբեկ

— Միրոյ մէջ հաշտութիւնը պաշիկով մը
պէտք է կնքուի, եթէ ոչ անվաւեր է :
Հօբոս Ռեմս

ՎԱՅԵԼՔ

Մարդս աւելի կը վայելէ յուսով քանիթէ

իրականութեամբ , երեակայութիւնը մեր սիրոյ առարկան միշտ կը զարդարէ բայց վայելումի վայրկենին կը հեռանայ անորմէ , Զը կայ բան մը որ այնքան գեղեցիկ ըլլայ՝ որքան այն առարկան որ մերը չէ : Ժ. Ժ. Ռուսակ

ՅՈՅՍ

Միայն սիրուելու համար կը սիրենք , և ասոր յոյսը կորսնցնելնուս պէս՝ սէրն ալ կը կորսուի : Սէրը յուսով կ'ապրի և անոր հետ կը մեռնի : Տէին ու Սարներէ

ՅԱԻՖԵՆՈՒԹԻՒՆ

Տըիփը կ'ուղէ որ ամեն ինչ յաւիտենական ըլլայ , այլ բնութիւնը կ'ուղէ որ ամեն ինչ վերջ ունենայ : Տէպրծ

— Յաւիտենապէս սիրելը՝ բանաստեղծական ասացուածք մ'է սիրահարներու գործածական , այլ ճշմարիտ է շատ կիներու նկատմամբ : Կանանց մօտ սիրահար մը ուրիշ սիրահարի մը կ'յաջորդէ՝ և յաւերժութիւնը գոյութիւն կ'ունենայ իրօք , վասն զի փոփոխութիւնը մի այն առարկային վրայ է :

Մարիկ
ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ

Եթէ սիրոյ երանութիւնը ամուսնութեան

մէջ ալ կարելի ըլլար դիմացնել, արքայութիւնը
թիւնն երկրի վրայ կ'ըլլար։ Ժ. Ժ. Ռուսո

— Ուր որ սէրը կը բնակի արքայութիւնը
միշտ հօն է, Ժ. Բ. Ռիզել
Դժոխված

Կիները սատանաներ են որ արքայութեան
դռնէն անցընելով զմեղ դժոխք կը տանին։
Առաջի կիորդանսա

— Երբ մարդ մը՝ մասնաւորապէս մէկ ան-
ձի նկատմամբ իր կինը կը յանդիմանէ՝ ինք
իրեն նախանձորդ մը կ'ստեղծէ, անխոհեմու-
թիւն է ըսել — Հոն մ'երթար, սատանան
հօն է, ատով մեղք գործել տալու՝ և դժոխ-
քը լեցընելու պատճառ կ'ըլլան։ Ա. Գոր

— Դժոխքը կնիկի լեզուներով սալարկուած
է, Աբբայ, Կիոյօն

ՄԱՀ

Դարերու սկիզբէն 'ի վեր մահը լացերու
պատճառ տուած՝ և ժամանակը սրբած է
զանոնք։ Ամենէ հաւատարիմ էրիկները ի-
րենց կիները հողը դրած են առանց իրենք
ալ հօն մանելու, և ամենէ հաւատարիմ կի-
ները իրենց էրիկները թաղած են առանց ի-

ըԵնք ուշ գերեզմանի մէջ անսնց հետևելու :
Տէկն ուզ Սարբէռէ

— Ինչպէս որ թմրած խոտը կը վերակեն .
դանանայ բարերար անձրեւ մը հողը ուռոգեւ
լուն պէս , այսպէս ես ալ , սիրականդ իմ Ա-
տել , կը վերածնիմ երբ հեշտութեամբ զիս
մեռցնելէ ետքը՝ քու համբոյրներով կը ծած-
կես զիս Արդ՝ սիրական հրեշտակդ իմ , քա-
նի որ գգուանքով՝ քու աշերու յառաջ բե-
րած ախտը այնքան դիւրաւ կ'ըռուժես , մեռ-
ցուր զիս դարձեալ . այդպիսի անոյշ կենդա-
նութիւն մը վայելելու համար՝ ստէպ մեռնե-
լու կը հաւանիմ : Ն. Պատէպն

— Հռոմի մէջ երկու ամուսիններու գե-
րեզմանի մը վրայ հետեւալ տապանագիրը
կը կարգացուէր — կանգ առ , անցորդ , և
տես հրաշք մը , ահա այս ու կին մը՝ որ ալ
չեն կռուիր : Ա. Ա.

— Յուրիքի շրջականներէն կօշկակտրին մէ-
կը գեղջուհի մը կը սիրէր որ մեռաւ : Խեղճ
կօշկակարը շիրիմ մը կանգնեց որու վրայ
կոշտ վարդ մը քանդակելէ ետքը՝ միայն սա
երեք բառերը գրեց . Նա ասոր կը նմանէր:
Գէմբէրժոն

— Բանաստեղծ մը իր կնոջ յիշատակը մըշ-
անջենապէս պատուելու համար հետեւալ
գորովալի տապանագիրը անջնջելի գրերով
անոր գերեզմանին վրայ դրօշմեց ,

Կինս հռո է , ո՞հ ի՞նչ կայան
Թէ իր և թէ իմ հանգստեան :

— Աւրիշ էրիկ մ'ալ որ նախընթագէն ոչ
նուազ անմիխթար էր՝ նոյն օրինակին հետե-
ւելով հետեւալ քառեակը գրել տուաւ ,

Յուրաշ շիրմիս ներքե
Հանգչի իմ կընիկ ,
Չեմ պատճառ թէև
Բայց գոհ եմ սաստիկ :

— Մահուան ինչ ըլլալը առաջին անգամ
կ'իմանանք երբ մեր սիրականին վրայ կ'ըյնի
այն : Տէկն ու Անոեւ

— Հաֆըզ պարսիկ բանաստեղծը տասնե-
րեք տարեկան ոլարմանուհիի մը գերեզմա-
նին վրայ՝ հետեւալ տողերը գրած է :

Եթէ շիրմէս ծըլի վարդ՝
Մի զարմանար , դու ով մարդ .
Զի վարդի պէս՝
Անրիծ՝ գեռհաս
Վաղամեռիկ մի հրեշտակ
Կը հանգչի աս շիրմիս տակ :

ԱՐԴԻ

Սգաւորութիւնը՝ կինիկի մը համար բայց
դաւորութիւն մ'է, և ճիշդ ատոր համար
եւ ալ երբէք պիտի չամուսնանամ, վախ-
նալով որ չըլլայ թէ կինս՝ դիս անդին դրկէ
սուզո ընելու համար։ Սևը կիներուն շատ կը
վայելէ։

Թէ էֆէլ Կօնիկ

—ԱՇ, ի՞նչերջանիկ են կիները, Աստուած
ցաւի մասին շատ դգայուն չէ ըրած զանոնք:
Շատ կիներ իրենց ամենասիրելի ամուսնոյն
մահուան վրայ կը մխիթարուին միմիայն մը-
տածելով որ սուզը իրենց շատ կը վայէ։

Պահանջառակ

ԶԵՐՄԵՌԱՆԴՈՒԹԻՒՆ

Յետին սէրը՝ ջերմեռանգութիւնը կամաս-
տուածասիրութիւնն է։

Սէնը էլլըզն

—Կիները երբ հաճելի ըլլալու տարիքն
անցուցած են՝ աստուածասէր կ'ըլլան, կ'ե-
րնի թէ անոնք Աստուածոյ ներողամութեան
խիստ շատ կը վստահին, որովհետեւ ի վեր-
ջէ Անոր կը նուիրեն ինչ որ մարդիկ ալ չեն
ուզեր։

Առբէն Տէ-բէ-յէ

—Երբ գեղեցիկ ջերմեռանգուհի մը իր

սիրահարին դէմ կը դնէ՝ միմիայն չայրելու
համար է այն կաթսային մէջ որ դժոխքը կը
գտնուի եռացող իւղով լի՞ Յիմար առաքի-
նութիւն մ'է այն։ Եւ իրօք կ'զարմանամթէ
եռացող իւղով լեցուն կաթսայ մը նախանձորդ-
ունենալու գաղափարը՝ սիրահար արհամար-
հանքով չհեռացնէր կնիկէ մը։ Անապատը

ՍԱՏԱՆՈՅ

Կինը սատանային գործիքն է։

Անըն Պետքանուն

—Աստուած կիներէ հեռի կենալ պատ-
ուիրեց մեզի, եղբարք իմ, բայց սատանան
մեզի քոյրել տուաւ՝ որպէս զի զանոնք մե-
զի մօտեցնէ։ Անըն Ֆրանչուկու

—Եթէ սատանան սիրելու կարող ըլլար
չար ըլլալէ կը գաղրէր։ Անըն Թէրէշտ

—Սատանան կնոջս աւելի մօտը կը պառ-
կի քան թէ ես։ Անապեր

—Կիներու հետ չատ բարեկամութիւն ու-
նենալու համար շուտիկը մարդուս քսակին
մէջ մտած ըլլալու է։ Անապեր

—Կղերն ու կինը սատանային երկու ճան-
կերն են։ Անապեր

Խ — Սատանան ժամանակաւ Յորին դէմ տ-
ոլոսամբելով անոր հարստութիւնը, առողջու-
թիւնը և զաւկըները առաւ, բայց հոգին տ-
ւելի ազէկ ցաւցնելու հսմար՝ կինը անոր թո-
գուց :

Ա. Ծ.

ՀՐԵՇՑԱԿԻ

Ժամանակաւ խենթենալու չափ սիրած
հրեշտակդ՝ ատեն անցնելով ատելի սատա-
նայ մը կ'երեւի աչքիդ :

ԵՐԵՎԱՆ

Եր քաղցրութեամբը կինը հրեշտակ,

Մեզմիշտ կ'երեւի... բայց մի հաւատաք
կընմանի ան խարերայ նարինջ

Ծառին վրայէն տեսք հրապուրիչ

Դուրսէն անուշիկ և ոսկիէ գոյն,

Ներսէն երբեմն սաստիկ դառնութիւն:

Բ. Ա. Ա. Հ.

ԱՏԱԿԻ

Ամուսնական դժբաղդութեանց պատճառու-
ներէ մէկը ան է որ աղջիկը անձին կը նա-
յի և մայրը ստակին :

Լ. Բ. Հ.

— Ամեն մարդ ստակով կը գնհատուի և
կ'վճարուի. յարգը, երանութիւնը, բարեկա-
մութիւնը և նոյն խոկ առաքինութիւնը՝ ոս-
կիով կը գնուին, կը վճարուին ու կը դա-

տուին, միայն մէկ բան կայ որ հասարակաց
կարծիքէ վեր՝ արեւու պէս անարատմացած
և արեւու ալ ջերմութիւն ունի, որ հոգին կը¹
կենդանացնէ, կը լուսաւորէ, կը զօրացընէ
զանի, բնութեան առ պարզել սէրն է:

Օբիրու ու Աւբին-

— Ստակի համար մ'ամսւսնանար, ատոր
համար ամսւսնացողը չէ թէ աղջիկն այլ օ-
ժիոք կ'առնէ, առուտուր մ'է այդ և չէ թէ
ամսւսնութիւն։ Միշտ նախամեծար համարէ
առաքինի անձերու հետ խնամութիւն հաս-
տառել, որոնց պատուաւորութիւնն սկզբանէ
անտի ժառանգական և անարատ եղած է։
Օր մը մարդուն մէկը՝ Թէմիսթօքլի կը հար-
ցընէր — Աղջիկդ աւելի յօժարութեամբ ո-
րու կու տայիր, պատուաւոր և քիչ հարուստ՝
թէ շատ հարուստ ու քիչ պատուաւոր մար-
դուն։ — Աւելի աղէկ ունիմ առանց ստակի
մարդը քան թէ ստակը առ անց մարդու։

Աբբայ Պլանլու

ՀՈԴԻ

Ամսւսնութիւնը անքակտելի բնողը չէ թէ
մարմինը այլ հոգին է։ Բառուեաս Աբբա-

— Միրահարի մը հոգին իր աչերուն մէջ
է, Աւբին

— Աէրը հոգին կը բարձրացնէ կամ կը
նուաստացընէ իրեն ծագում տուող առար-
կային համեմատ : Տէին ու Պօմօն

ԲՆՑՐՈՒԹԻՒՆ

Երիտասարդ մը՝ որ մը Անտիոքենէս փի-
լիսոփայէն կ'հարցնէր թէ՝ ի՞նչպէս կին պէտք
էր առ ել : → Եթէ գեղեցիկ կին մ'առնես,
ըստ փիլիսոփան, մինակ քուկդ պիտի չը-
լայ, եթէ տղեղ առնես՝ շուտով պ'տի զր-
զուխո, անանկ կին մ'ընտէ ուրեմն՝ որ ոչ
գեղանի և ոչ անճոռնի ըլլայ, այլ բարի և
աշխատասէր : Ա. Խ.

— Քենէ բարձր բարեկամ մը վնտոէ,
այլ քենէ վար կին մը առ, որպէս զի քեզ
հրամայող տէր մը շունենաս վրադ, ան կի-
նը որ մեծ անուն մ'ունենալով քու տունդ
կը մտնէ ինքզինքը տան ամենէ մեծը կ'հա-
մարի և ան որ ստակով կու գայ կը կարծէ
թէ տան մէջ հրամայելու իրաւունքը ծախու-
տուած է : Տէին ու Ռէկս

— Փնտոէ կին մը՝ որ քու ճաշակին յար-
մար ըլլայ և չէ թէ ուրիշներուն :

— Չկայ բան մը որ այնքան գժուար ըլ-
լայ որքան բարի էրիկի և բարի կնոջ մը ըն-
արութիւնը : Ժ. Ժ. Ռուսոն

ՏԳԵՂԱԽԹԻՒՆ

Տգեղ կնիկի մը միմիայն մէկ խրատ կրնայ
տրուիլ. — Հոգւոյդ գեղեցկութիւնը թող
դէմքիդ տգեղութիւնը ծածկէ: Թաղէս

— Կին մը որքան ալ տգեղ բլայ՝ ինք իր
վրայ գեղեցկութեան նշոյլ մը կը դանէ: Օդէս

— Ամենէ տգեղ կիները՝ ամենէ շատ սըգ-
ւողներն են, վասն զի անոնք չկարենալով գե-
ղեցկանալ՝ հարուստ երեալու կ'ջանան: Աղեղէս

Տգեղ կին մը ընդհանրապէս առաքինի
կ'կարծուի, գեղեցիկ կին մը սա դժբաղդու-
թիւնը ունի որ ենթակայ կ'համարուի այն ա-
մեն տկարութեանց՝ որոնց ինքը պատճառ
կու տայ:

— Երիկի մը տգեղութիւնը անոր կնոջը սի-
րահարին գեղեցկութիւնը կ'աւելցնէ:

— Մեծ արժանիք մ'ունեցող մարդ մը եր-
բեք տգեղ չէ, անոր անունը յիշուելուն պէս
մարմինը կը մոռցուի և մեր խորհուրդները ա-
նոր հոգւոյն կը փարին: Շ. Ուսհնէլ

— Տգեղութեան մեջ սա անիրաւութիւնը
կայ որ կանանց բոլոր արժանիքը կը մարէ
ու կը թաղէ:

Տէկն Լահոնէր

— Տգեղ կին մը եթէ սիրուի՝ անսահման կերպով կը սիրուի, վասն զի կամզայն սիրողը զարմանալի տկարութիւն մը՝ և կամթէ այդ կինը գեղեցկութենէ դուրս ամենագաղտնի ու անյաղթելի հրապոյրներ ունենալու է :

Լ. Պէտուհեր

— Գեղեցկութիւնն ու տգեղութիւնը մարդերու քաքրիսէն կամ երևակայութենէն կախում ունին :
Լ. Պէտուհեր

— Անգեղեայ կին մը՝ անգեղեայ մարդէ մը աւելի տգեղ է :
Թ. Կօնիկէ

— Մոլութեան տգեղութիւնը՝ տգեղութեանց ամենէ ահուելին է :
Ա. Ռէտար

— Առաքինութենէ ետքը՝ պարմանուհի մը ամենէ հաւատարիմ պահապանը տգեղութիւնն է :
Տէկն. Ժանե

— Գեղեցիկ կին մը կ'ուզէ որ զինքը սիրեն, իսկ տգեղը ինքինքը սիրոյնելու կ'աշխատի :
Ալենդրու

— Եթէ գեղեցկութիւնը կիներու միաեարժանիքը կազմէր, տգեղները ինքինքնի կախել պէտք էին :
Թ. Կօնիչ.

— Քօնթի իշխանը նշանաւոր տգեղութիւն մ'ունէր : Օր մը դուրս երթալու ատեն կինը

կանչելով ըսաւ, — Տիկին, մանաւանդ կ'պատուիրեմ ձեղոր այս բացակայութեանս ատեն ուրիշը չսիրէք. . . . : — Ո՞հ, մի վախնաք, իշխան պատասխանեց իշխանուհին, այդ բանը միայն ձեր ներկայութեան ատեն մտքէս կ'անցնի :

Ա. Ո.

ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ

Գեղեցիկ կիները՝ ի սկզբանէ անտի իրենց դատերը վաստկած են: Արդարութիւնը զանոնք աեսնելու համար աշքերուն վրայէն պատառը հանելէն՝ ի վեր՝ անոնց ամեն պահանջածը իրաւացի կ'երկի:

Տիւ Պօստ

ԵՐԻՑԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ

Բանի մը չծառայեր երիտասարդութիւնը առանց գեղեցկութեան, և ոչ ալ գեղեցկութիւնը առանց երիտասարդութեան :

Լ. ՈՒԾՂՅՈՒՆՔ

— Ի՞նչ է երիտասարդութիւնը առանց սիրոց՝ և սէրը առանց երիտասարդութեան :
Պայլն

Այդը երբ ծագի, իմ անուշիկ վարդ, Զեփիւռք կը պարեն քու շուրջը զուարթ Ամեն ոք կ'երդնու թէ պաշտէ զքեզ, Եւ պիտի սիրէ նաև մշտապէս :

Հազիւ արեւ կը մտնէ 'ի մար ,
Սէրըն է արդէն փոխուած յարհամարհ ,
Թռուցիկ էր այն բոյլը սիրաւէտ ,
Եւ խոյս ետ փախաւ քու գոյներու հետ :

Այս է միշտ վախճան մատղալ օրերու ,
Բիւր սիրտ նուիրուին իրեն իղձերու ,
Յանկարծ ծերութիւն կը համնի միւս օր ,
Ծաղիկը կ'ըյնի՝ և սէրը հեռու ,
Կը վնտուէ իրեն վայելք նորանոր :

ԱՂԻՈՐ

Ընհանրապէս էրիկ մարդերու առջեւ կա-
նանց առաջին արժանիքը աղւոր ըլլանին է ,
իսկ կանանց մեծագոյն երանութիւնն է իրենց
աղւորութեան դովուիլը լսել : Տիկն ո՞Սրտօնիւ

— Կին մը միակ կերպով մը գեղեցիկ (belle)
կրնայ ըլլալ , բայց աղւոր (jolie) ըլլալու հա-
րիւր հազար կերպ կայ : Մօնեկուիւ

— Ֆօնթընէլ օր մը իր նոր պսակւող բա-
րեկամներէն մէկուն հանդիպելով հարցուց
անոր թէ — Կինը աղւոր էր : — Շատ սիրուն,
մտացի և լուսաւորեալ է , պատասխանեց նաև
— Հարցուցածս ատ չէ , վրայ բերաւ ֆօնթը-
նէլ , միթէ աղւոր է , — կինը միայն ատ ըլ-
լալու պարտաւորեալ է :

— Աղւոր կին մը , մէկ կամ երկու տարին

աղէկ է, երկրորդ տարին՝ անոր դէմքին չնորհ-
քով կտրուած քը քեղի համար արժէ ք մը չու-
նի, ալ ինչ փոյթդ այնչափ ատեն պաշ-
տուած ձեռքը, ոտքը, հասակը։ Այնուհե-
տեւ սիրածդ չէ թէ աղլոր կինն է՝ այլ քու
կինդ։ Աղլոր կինը ձանձրալի զուգս (luxe)
մ'է, անհանգիստ ընող զարդ մը, վտանգա-
ւոր (enseigne) մը որու լաւ կողմը դէպ ՚ի
փողոց դարձած է և կոնակը քեղի, հետեւա-
բար ոչ այլ ինչ է նա բայց եթէ շանթածիդ
դործիք մը։

Օ. Ֆեոկ

—Աղլոր կին մը՝ ամենու հաճելի եղող
հիանալի խաղալիք մ'է, այլ երբ կինը ու-
րիշ յատկութիւն չունի մտացի մարդերը ա-
նոնցմով կը զուարճանան։ յիմարները կը սի-
րահարին անոնց։

Ա. Ռէտր

Փ Ո Թ

Դէմքին փոթերը սիրոյ գերեզմաններն են։
Սարադն

—Դէմքի վրայ գտնուող փոթերը մար-
դուս տարիքը կը ցուցնեն ինչպէս որ արեւա-
ցոյց մը ժամերը։

Տէս Պօստ

—Եթէ մարդս ստեղծուելուն միջոցին Աս-
տուծոյ քով գտնուեի, պիտի աղաշէի որ փո-
թերը անոր զարչապարին տակ դնէ։

Նինան առ Լանդլ

— Աիրատը փոթ չունի : Տէկն Աւլուկնե

— Փոթերու տակ թէ գեղեցկութիւնը և
թէ տգեղութիւնը աներեսոյթ կ'ըլլան, մին
կը կորսուի և միւսը կը պահուի : Բնուե Սեւ

ԳՈՎԵԱՏ

— Երբ մէկը կըգովէ զքեզ, դու ինքդ
քու դատաւորը եղիր : Ք. ա. Ռ. Յ.

— Գովեստներու արժէքը զանոնք տուղարշակ
ներու արժէքէն կը չափուի :

Օրենորդ ու Լեռբնաս

— Ամենէ աւելի զովելիէ այն կինը՝ որու
վրայ շխօսուիր : Տէկն ու Բայենէս

— Ոսկին կընաս երկու հոգիի մէջ բաժանել,
այլ գովեստը ոչ . ամենէ մեծ հոետու-
րը նաև երբ հրեշտակ մ'է՝ չկընար երկու
կին, երկու դիւցազն, երկու հեղինակ՝ և ոչ
իսկ երկու սուրբ գոհացնել : Մարտնիւլ

— Կին մը իրեն համար ամենէ ողոքալի
դովեստ մը կը համարի այն բանբասանքը՝ որ
ուրիշ կիներու նկատմամբ կ'ընեն իր առջեւ
Ժ. Ժ. Ուսուս

— Որպէս զի կնոջ մը տրուած գովեստը
արդար ու ազնիւ ըլլայ զայն տուղը անոր-

մէ ակնկալութիւն մը պէտք չէ ունենայ . գեռ
ըիի մը բերնէն ելած դովեստը միշտ կասկա-
ծելի է :

— Սիրուիլը ամենէ մեծ գովեստը ընդու-
նիւ է : Տէսն նէրեր

ՀԱՅԵԼԻ

Կի՞ները՝ աւելի զարդարուելու՝ քան մեր-
կոթիւննին ծածկելու համար կը հագուին,
և հայելիին առջեւաւելի էրիկ մարդերու՝ քան
Երենց վրայ կը մտածեն :

* * *

— Հայելին միակ բարեկամն է , որու կին
մը իր պակասութիւններու գաղտնիքը ցու-
ցընելու շվախնար : Աքբայ Կառա

Տգեղ մարդու մը վրայ որ ստէպ հայելին
կը նայէր :

— Մա հայելին մէկ դի թող , պարոն նի-
կողոս , հեռացիր անորմէ եթէ չես ուզեր
Նարկիսի նմանիլ , Նարկիս մեռաւ ժամանա-
կաւ ինքինքին սիրահարուելով . և դու եթէ
չզգուշանաս՝ պիտի մեռնիս ինքինքի դ զըդ-
ուելով :

ՀԱՄԱՐՈՒՄ

Մեծ յիմարութիւն մ'է մարդու երջան-
կութիւնը նոյն իսկ իրերու մէջ դնել՝ մինչդեռ

երջանկութիւնը միայն համարումին վրայ կը կայանայ : Ամուսին մը խիստ տգեղ կին մը ունի և զան խիստ գեղեցիկ կը գտնէ , չէ մի որ զանի այդպէս համարիլը իրօք գեղեցիկ ըլլալուն հաւասար է : Էրանչ

— Օր մը կ'գտնուէի Ս. տիկնոջ քով՝ որու տրփական յարաբերութիւններուն տեղեակ էի : Իր էրիկը որ իմաստակ զօրական մ'էր և շարունակ իր ընտանեկան երջանկութիւնը գովելու մոլութիւնն ունէր, սկսաւ դարձեալ իր կնոջ հաւատարմութիւնը բարձրացնել, տիկինը իմ կողմը ծռելով՝ — Էրիկս զիս կը խնդացընէ յիրաւի, ըսաւ ժպտելով, իր բարի համարումով . ծիծազս չեմ կրնար բռնել երբ միտքս կը բերեմ թէ որչափ պիտի զարմանայ վերջին դատաստանին օրը ճշմարտութիւնը իմացած ատեն : Լ. Հ. Տ. Ե.

— Տեսած ես երբէք կին մը որ իր բարեկամներէ մէկը ուրիշ կնոջ հետ սերտ յարաբերութեան մէջ տեմնելով չնախանձի կամ չհամարի թէ այդ կինը այդ մարդուն վրայ չգթար : Ալ ատկէ հասկցիր թէ կիներն իրարու վրայ ինչ համարում ունին : Շամփու

ԿՈՏԱԿ

— Սէրը մատնիշ մ'է՝ որու հետ կատակելը խոհեմութիւն չէ : Նիւճ ու Լ. անդլ

Եթէ աղջիկ մը կ'ուզէ,
Մընալ յաւէտ իմաստուն ,
Յիշէ որ փոքր կատակէ ,
Կրնայ ծագիլ մեծ զղջում:

፳፻፲፭

—Կինմը երբ սիրոյ վրայ խնդալ կ'ձեացընէ, կը նմանի այն տղոց որ գիշերը մութէն վախնալով կ'երգեն։ Ժ. Ժ. Առաքուս

— Ուրախութիւնը բազմաթիւ խենթութիւններու մայր է, կիները խնդալով կը կորսուին :

—Առաքինի կին մը ուզած ատենը կրնայինքինքը յարգել տալ, և յանցանքն իր անզգուշութեան տալու է երբ մէկը իր առջև այդ յարգանքը կը մոռնայ: Երիկ մարդիկ կիները խնդացընելու կ'աշխատին և այդ պատրուակաւ երբեմն շատ յառաջ կ'երթան իւրենց խօսքերու մէջ: Վայ այն կնոջ՝ որ ինքինքինքը խնդալով կը պաշտպանէ . . . : Ծանըութիւնը սիրոյ մէջ առաքինութեան վահաննէ:

ԱԵՐԳ

— Պարող կիներուն ամեն խօսքերուն և
դործերու մեծ մասին մէջ վարպետութիւն
կայ

—Մարդո նրբամտութիւն կ'ստանայ , կիւ
նը նրբամիտ կըծնի : Տէպէց

—Կանանց նենգութիւնը իրենց տարինեւ-
րուն հետ կ'աւելնայ : Կըլուծնէ

—Ամեն կին աւելի կամ նուազ մաքիա-
վելութիւն ունի , ըստու ջիտրօ , մեղ համար
անյաղթելի պատուար մը՝ կանանց համար
մամուկի ոստայն մ'է : * * *

—Վարպետութիւնը գեղեցիկ սեռին յա-
տուկ մէկ տաղանդն է : Այս մասնաւոր ճար-
տարութիւնը տրուած է անոնց իրրե շատ ար-
դար հատուցում մը այն ֆիզիքական զօրու-
թեան փոխարէն՝ զոր մարդէննուազ ունի : Ե-
թէ կինը վարպետութիւն չունենար՝ էրիկ մար-
դու չէ թէ լնկերը՝ այլգերին կ'ըլլար , այդ
վարպետութեամբ է որ իր հաւասարութիւնը
կը պահէ նաև անոր հնազանդելու ատեն
զանի ինքը կը կառավարէ , կինը ամեն բան
իրեն հակառակ ունի , իր թերութիւնները
տմօթխածութիւնը և տկարութիւնը , և ա-
տոնց փոխարէն միայն իր արուեստն ու գե-
ղեցկութիւնը : Հետեւաբար իրաւունք ունի
երկուքն ալ մշակելու :

Ժ. Ժ. Ռուսո

—Միրոյ մէջ ամեն նենգութիւն ներելի
է : Եատ անդամ՝ մարդ մը իր սիրուհիէն
նախանձիլ կը ձեւացընէ որպէս զի անոր նա-

խանձը արգիլէ, և երբեմն ալ իրը անհաւատաբիմ՝ կ'ամբաստանէ զանի իր անհաւատաբամութիւնը աւելի աղէկ ծածկելու համար։
Ո-էւ

ՀՍԿՈՂՈՒԹԻՒՆ

—Աշխարհի մէջ չկայ բան մը զոր այնքան գծուար ըլլայ պահել՝ որքան կին մը որ ինքզինքը չ'ուզեր պահել։
Բրօքէր»

—Աւելի դիւրին է դրիւ մը լու պահել քան միակ կին մը։
Առաջ

Խորագէտ գլխով՝ և յիսուն տարու,
Մէկ դարու կեանքով վարժ ու փորձառու՝
Թող ըլլայ մարդ մը, մոքով անուանի
հոնչ ըսեմ, եղբայր — հաւտա խելք չունի
Եթէ լոկ կին մը պահել կ'աշխատի։

—Միականի ամուսին մը իր կնոջ ստէպ
բացակայութիւններէ շատ կը զայրանար։ Օր
մը որ իր կինը սովորականէ աւելի ուշ տուն
դարձած էր՝ նա այնչափ բարկացաւ որ զանի
ծեծեց, դործը խիստ գէշ կերպարանք մը
առնելու վրայ էր երբ իրենց դրացիներէն
դերասան մը յանկարծ միջամտեց և ողբեր-
գական եղանակաւ մը նախանձու պարոնին
ըսաւ,

Դու ընդունայն
Լրտեսես զայն
Որ իր սիրոյն արգելք ըլլաս,
Որչափ հըպարտ ես կոմիտաս,
Զի մինչ Արգոս՝ հարիւր աշքով,
Զկրցաւ պահել իր միակ կով,
Կը պահանջես, դու միտչուի,
Որ կինդ քովէդ չը փախչի:

Եթէ ինձ յանձնեն գանձ մը թանկագին,
Կը պահեմ անեղծ։ Յանձնեն թող ինծի,
Եօթգլխի վիշապ՝ դէմքով ահռելի
Վըհուկ իսկ ըլլայ՝ հոգս չէ կրկին.
Այլ թէ շուքիս տակ՝ տան կոյս նորատի,
Դողդոջուն ձայնով, աչքով սիրատու,
Ամօթխած դէմքով՝ անմեղ, գեղանի,
Սէրն ու ես ալ չենք պատասխանատու։
Լաֆոնին

Ա.ՉԱ.ՏՈՒԹԻՒՆ

—Բաւական է սիրել՝ ազատ ըլլալէ դադ-
րելու համար։
Բրօնիւն

—Կիներու վայելած ազատութենէն ճիշդ-
կրնայ չափուիլ ամեն երկրի և ամեն դարու
մէջ այն քաղաքակրթութիւնը՝ ուր մարդիկ
հասեր են։
Եւիլ ու մէր ժերարդէն

ԱՐՏՈՒՐԻԹԻԻՆ

— Նպարավաճառ մը որ վեցամսեայ ստիւ-
պումնելք վերջը յաջողեր էր մանկամարդ
դերձակուհիի մը հետ ամուսնանալ, հարսա-
նեաց երկրորդ օրը ուրախութեամբ կ'ըսէր ա-
նոր — ԱՌՀ, ինչ աղէկ ըրիր, Աննիկ, ամուս-
նութենէդ յառաջ ինձ բան մը չ'չնորհելով,
վասն զի ճշմարիտ կ'ըսեմ, եթէ իմ շոգմոգ
խօսքերէս խարուէիր, մաս վկայ հետդերբէք
պիտի չ'ամուսնանայի — Անանկ ըլլալիքը գի-
տէի, Յովակիմ, պատասխանեց նոր հարսը,
և ահա ճիշդ ատոր համար քեզի հետ աւելի
արթուն գտնուեցայ :

ՅԱՐԱՏԵՒՄԻԹԻԻՆ

Ամենախիստ բարքով կինն իսկ
երկար սիրոյ մը կը գըթայ՝
Սիրովն կ'ըլլայ վերջն երջանիկ
Յարատեսող եթէ մընայ :
Քաղցր ու դիւրին է ամեն բան,
եթէ կ'ուզենք սիրտ մը շահիլ,
կը գտնէ գետն ինք իր ճամբան
Զայն փնտուելով միշտ անդադար
Զուր որ հոսի կաթիլ կաթիլ
Ծակէ նաև կարծրագոյն ժայռ :

Քիւտ

ՀԱՄՈՉՈՒՄ

Հաճելի ըլլալու ձիրքն ունենալը՝ արդէն
մեծ միջոց մ'է համոզելու համար :

ՑԵՆՑԵՆՔ

— Դեղեցիկ կնիկները կը համոզեն զմեզ
նոյն խոկ երբ մեզի հետ չեն խօսիր : Տէ-բէնէ

ՍԿԶԲՈՒՆՔ

Կիներէ շատերը ամենևին սկզբունք չ'ու-
նին. իրենց ուղղեցոյցն է իրենց սիրտը և բա-
րուց մասին իրենց սիրած անձերէն կախում
ունին : Լ.Պ.Պէտրէ

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

— Զկայ աւելի ձանձրալի խօսակցութիւն
մը՝ որքան այն սիրահարինը՝ որ ալ իր սիրու-
հիէն ոչ ակնկալութեան և ոչ վախնալու տեղ
մ'ունի : Տէն ու Սուրբքէ

— Երբ կնոջ մը հետ սիրոյ վրայ կը խօ-
սիս, խօսքը մ'երինցներ, այլ սահէ անցիր :
Կանայք աւելի գուշակել քան լսել կ'ուղեն,
և ինչպէս որ սիրուն մարդ մը ըսաւ, իրենց
երեակայութիւնը շուքի մէջ արջիլը կը սիրէ :
Ժ. Ժուպէր

— Ինն հարիւր կնիկ մէկտեղ դիր գոցէ
քառասուն և ութը ժամ, և անոնց մէջ տե-
ղը նստիր, որ կողմք որ ականջ տաս՝ պիտի
տեսնես որ միակ նիւթ մը պիտի զբաղեցնէ
դիրենք, այն է քուրջերու խօսքը։ Ա. Ռէտար

ԵՐԱԾՈՒԹԻՒՆ

— Աստուածները երաժշտութիւնը տուին
մարդերու անոնց կիրքերը հանդարտեցընե-
լու համար։ ԲԼՅՈՒՃ

— Երաժշտութիւնը սորվելով է որ շատնո-
րատի սրտեր սիրել կը սորվին։ Ա. Ռէտար

ՆՈՐԵԼՔ

— Նորելքը՝ (mode) երիտասարդութեան
կուռքն է, և ունայնասիրութիւններու ամե-
նէ վնասակարը։ ՕՀԵԿԱԲԷՔԵՐՆ

— Նորելքի սէրը որու կիները գերի են,
ան համ բան է, վասն զի նորելքներու հետ
մարդուն դէմքը չփոխուիր, և նոյնը մնալուն
համար՝ անգամ մը իրեն վայլող բան մը միշտ
կ'վայլէ։ Գրեթէ միշտ տգեղ կիները նորելք
կը հանեն և գեղեցիկներն ալ անոնց հե-
տևելու յիմարութիւնը կ'ընեն։ Ժ. ՌԱՄԱԶ

— Օր մը՝ Մասկոն բեմի վրայէ՝ զուգսի
(luxe), նորելքի, մէկ խօսքով այս աշխարհիս

ունայնութեանց դէմ կը բողոքէր : Յանկարծ
խօսքը պիսակներուն (պէնկ) վրայ դարձընե-
լով գոչեց . — Հապա ի՞նչ են այդ պիսակները
զորս դէմքերնուդ վրայ կ'փակցընէք՝ եթէ
ոչ ունայնասիրութիւն : Ատոնք ուրիշ նպա-
տակ չ'ունին՝ բայց եթէ էրիկ մարդերու նա-
յուածքը հրաւիրել հրապոյըներու վրայ զորս
կ'ուզէք անոնց հիացման առարկայ ընել, ի՞ն-
չու ուրեմն ուսերնուդ՝ կուրծքերնուդ վրայ
ալ պիսակ չէք դներ ձեր վրաւ զարմացող-
ներու հետաքրքիր նայուածքները մինչև կա-
րելի եղած սահմանները հրաւիրելու համար :

Այս դասը իր արդիւնքը ունեցաւ : Երկ-
ըորդ օրք բոլոր տիկինները կուրծքերնուն
վրայ ալ ունէին պիսակներ՝ որոնց անունքՄա-
սիյօն մնաց :

Տէ՛մ առ Բուշոյնէօ

— Կին մը պիտի յուսահատէր՝ եթէ այն-
պէս ծնէր՝ ինչպէս որ նորելքը զինքը կ'կար-
դադրէ :

Օքուրդ Լէոբիսաւ

— Աղքատները հարուստներու հետեւած
նորելքներուն հետեւելու աշխատելով ծիծա-
ղելի կ'ըլլան ու աւելի ևս կ'աղքատնան :

Ա. Ռիւտը

— Սիամի թագաւորներէն մէկը էմանալով
որ բարիզեան նկարիչ մը իր տէրութեան մէջ
կը գտնուէր, զանի կանչել տուաւ և հրամա-
յեց որ բոլոր Եւրոպայի ազգերը նկարէ ի-
բենց սովորական հագուստներով : Նկարիչը

այս հրամանը կատարեց և գաղղիացին բոլորովին մերկ նկարեց թեին վրայ կտոր մը կտաւով : — Խելքդ ո՞ւր է, հարցուց անոր թագաւորը, և ինչո՞ւ գաղղիացին մերկանդամ նկարեր ես : — Տէր իմ, պատասխանեց նկարիչը, մի զարմանաք, գաղղիացին այնքան ստէպ իր հագուստին ձեւ կ'փոխէ՝ որ զինքը ինչ հագուստով նկարելս չգիտնալուս՝ ձեռքը կտոր մը կտաւ տուի որպէս զի ուզածին պէս հագուի :

ՆԿՅԱ

ՆՄԱՆՈՒԹԻՒՆ

— Երբ կաթիլ մը աղի ջուրը դաւաթ մը ջուրի մէջ ըյնի՝ աղին համը կու տայ անոր. դետ մը ովկիանոսին մէջ թափելով նոյն ինքը ովկիանոս կըլլայ, կին մը էրիկ մարդու մը հետ ամուսնանալով անոր պատկերը կ'առնու:

Մ-Հ-Հ-

— Մոմը մարելուդ պէս ամեն կին մէկ է :

ՊԼԱ-ՊԱՐՔ

— Քեզի նմանող մարդուն հետ ամուսնացիր, իրարու կ'զարնուին անոնք որ իրարու չեն նմանիր :

Մ-Բ-Շ-Հ-

— Կին մը որքան ֆիզիքապէս ու բարոյապէս մարդէն տարբերի՝ այնքան հաճելի ու սիրելի կ'ըլլայ :

ՈՒ-Հ-Ա-Է-Ա-

— Կնիկի նմանելու աշխատիլը կանանց հա-
ճելի ըլլալու միջոցը չէ, վասն զի կանայք
զիրար այնքան կ'ատեն որ իրենց նմանող
մարդը՝ հարկաւ չեն կրնար սիրել։
Ժ. Ժ. Ռուսոս

— Ներողութեան մը ատեն վանական մը
Հռոմ գնաց, և որովհետեւ Ա. քահանայապե-
տին շատ կը նմանէր՝ սա ուզեց զինքը տես-
նել. Պապը աչքովը ստուգելով որ իր և ա-
նոր մէջ զարմանալի նմանութիւն մը կար —
Միթէ, հարցուց, երբէք ձեր մայրը Հռոմ չէ
եկած ու խտաւորութեան։ — Ոչ, սրբազն
հայր, պատասխանեց վանականը, մայրս բնաւ
չէ եկած, այլ լուսահոգի հայրս իր երիտա-
սարդութեան ատեն ստէալ կու գար։

ԵՐԱԽՏԱԳԻՑՈՒԹԻՒՆ

— Կինը՝ ցին թռչունին բնութիւնն ունի,
պարապ բան է անոր բարիք ընել։ Բկերան

— Երախտագիտութիւնը երբեմն բարեկա-
մութիւն յառաջ կը բերէ՝ բայց սէր չկրնար
յառաջ բերել։ Տէին ու Սարնուէ

— Սէրը ճշմարիտ և ակամայ քաքրիս մ'է
զայն զգացողին սրտին մէջ։ Ինչու ուրեմն
կ'ուզէք որ ձեր սիրած առարկան ձեզի պըզ-
տիկ երախտագիտութիւն մ'ունենայ կոյր ըդ-

գացումի մը համար՝ որ առանց իր հաւանութեան ծնած է ։ Յիրաւի էրիկ մարդիկդ զարմանալի էք. ինքինքնիդ անարդուած կը համարիք կին մը չպատասխանելուն պէս այն նայուածքին՝ որ իր վրայ կը զիջանիք նետել։ Ճեր հպարտութիւնը կը վիրաւորի և զանի անիրաւ կը համարիք, իրը թէ իրեն սիրահարելնուդ համար ինքն յանցաւոր՝ ու միանդամայն պարտաւոր ըլլար միւնոյն ժամուն միւնոյն հիւանդութեամբ բռնուելու։

Նինս ու լանդլու

— Բան մը մի զոհէք ձեր սիրուհիներուն, պարոններ, անոնց համար ոչ ձեր բարեկամներուն, ոչ ձեր պաշտպաններուն և մանաւանդ ձեր ընտանիքին հետ մ'աւրուիք։ Սիրեցէք, այլ ինչպէս որ կ'ըսեն ծառին կոճղէն մի հեռանաք. վտանգաւոր է շատ վեհանձն ու առատասիրտ ըլլալ ապերախտներու համար։

Ուշաբեն

— Երախտագիտութիւնը շեղ ճամբայ մ'է որ շուտով սիրոյ կը տանի։ Թ. Կոնկե

ՓԱԿՈՒՄ

Կիները փակելէ ետքը, Մուհամետ դքժոխքը անօդուտ դատելով ջնջեց։ Կրէ

— Էրիկ մարդու և կնոջ միջև սէր, տրիս,

միևնոյն սովորութիւններ և ինչ որ ուզեն
կրնայ գոյութիւն ունենալ. բայց ճշմարիտ
քնկերութիւն չկայ: Կինն ու մարդք միաբան
չեն քալեր: Սեռին տարբերութիւնը իրենց
մէջ կը գնէ միևնոյն բաժանումը որ ցեղե-
րու տարբերութիւնը կենդանիներու մէջ կը
գնէ: Թւստի փոխանակ հաւանութիւնը տալու
այն բանին որ այսօր կնոջ աղատութիւնը կը
կոչուի, եթէ պէտք ըլլայ իմ՝ մասիս աւելի
աղէկ ունիմ որ կինը փակուի: — Կնոջ իրա-
ւունքը և էրիկ մարդու հեռ իր յարաբե-
րութիւնները տակաւին չեն սահմանուած,
ամուսնական սմբողջ օրէնքը ինչպէս նաև քա-
ղաքայինը՝ ի նորոյ պէտք և շինել:

Բ. Ժ. Բըստոն

ԶԱՐԴ

— Աղջիկները ամենէ շատ ուրախացնող
բանը զարդարուիլն է: Մուշեր

❖ Տգեղ կամ պառաւ կին մը երբ սաստիկ
կը զարդարուի՝ կը յայտնէ թէ տգեղութեան
կամ ծերութեան վրայ կ'աւելցընէ նաև խեն-
թութիւնը: Օքսորդ Ամերէ

❖ — Կնչոր կ'ուզեն թող ըսեն, կիները միայն
հաճելի ըլլալու համար կ'հագուին, և դէմքով
հաճելի ըլլալու կ'աշխատին կամ սիրահար
մ'ունենալնուն՝ և կամ վնտուելնուն համար:
Տէլէն ո'Արտոնքէւ

— Կիմեր կան որոնք պէտք են զարդարութիւն կ'նմանին անոնք այն միսերուն՝ որոնք չեն ուտուիր առանց շատ համեմուելու։

Ուշադիշ

— Անդամանդներու հեղեղի մը մէջ շատ կիներու պատւոյն խղդուիլը տեսած եմ։

Ա. ո՛Ռաբուն

— Ետ զարդարուող կինը Աստուծոյ պատկանը կ'աւրէ։

Ա. ռազ

— Ենորհքով կնիկ մը փողոցին մէջ պարզ և մութ գունով զգեստ մը հադնելու է։ Փողոցին մէջ աչքի զարնելու կամ երեալու փափաքը թշուառ արարածներու կը վայելէ։ որոնք ընդունելութեան որահակ մը չունին՝ և որահակ մը չեն կարող մտնել, որով կ'ստիպուին փողոցը իրենց որահակը ընել, և հոն յաջողութիւն գտնել ու մեծարուիլ։ Բայց հոս չխարուինք։ Մի կարծէք թէ կիներու խրատ կու տամ որ զարդարանքը չսրեն։ Աստուած չընէ։ Կնոջ մը պարտաւորութիւնն է կրցածին շափ աղւորնալ։ Բայց մի ընէք այն նկարչին պէս զոր Ապեղէս կը յանդիմանէր Աստղիկին պատկերը վզնոյներով ու ապարանջաններով բեռնաւորած ըլլալուն համար — Զան գեղեցիկ չկրնալով չինել։ հարուստ շիներ ես, ըսելով։

կիներ, միշտ ձեզի ամենէ շատ վայլով

գոյներն ու ձեւը ընտրեցէք. ինամեցէք
ձեր գեղեցկութիւնը այլ նաև յարգեցէք զայն
Զկայ անդամանդ մը որ աղոր աչքերու պէս
աղոր ըլլայ, չկայ գոհար մը որ ձեր մազին
մէկ թելը արժէ՛ Զարդերու մէջ ձեր գեղեց-
կութեան համար համեմմը փնտռեցէք: Զեր
գեղեցկութիւնը մեղմանոյշ (suave) ներդաշ-
նակութիւն մ'է՝ որու պէտք են ընկերանալ,
ձեր զարդերը ու զայն աւելի ՚ի լոյս հանել
և չէ թէ խղդել:

Ա. Քոր

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ

Մարդ կիներէ որքան հեռանայ՝ այնքան
կատարեալ է:

Սուրբ Էլեան

— Քիչ կան անանկ կատարեալ կիներ՝ ո-
րոնց էրիկը գոնէ օրը անդամ մը չզղջայ ա-
մուսնացած ըլլալուն վրայ, և կամ թէ կնիկ
չունեցողին երանի չկարդայ: Լո Պէտուել

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ

Զկայ բան մը որ այնքան պատիւ բերէ
կնոջ մը՝ որքան իր համբերութիւնը, և չկայ
բան մը որ այնքան ամօթ համարուի՝ որքան
իր էրիկի համբերութիւնը: Ժանակը

ՊԱՐՏԱԿՈՐՈՒԹԻՒՆ

Պարտաւորութիւն բառին մէջ չգիտցուիր
ինչ մոգական բան մը կայ՝ որու արդիւնքը
դատաւորներու ոյժ, զօրականներու արիու-
թիւն՝ և ամուսիններու պաղութիւն կուտայ:
Տէ-բէ-յէ

—Աղջկան մը պարտաւորութիւնը իր հնա-
ղանդութեան մէջ է: Ռէեր Քօռնել

—Ինո՞յ մը պարտաւորութիւնը իր կամա-
լարութեանը մէջ կը գտնուի: Գ. Դ'Արեւել

—Կին մաւելի սիրով՝ քան թէ վախով
իր պարտաւորութեանը մէջ կը պահուի:
Թէրանու

ԹԵՐՈՒԹԻՒՆ

Մեր սիրած անձին թերութիւններուն նա-
յելու է այն աչքով՝ որ մեր թերութեանց
կը նայինք:

Տէկն ու կը գիտին

—Ով որ իր սիրածին թերութիւնները
չսիրեր՝ չկընար բաել թէ ստուգիւ սիրահա-
րած է: Գալուելն Ա

—Սիրահարք իրենց թերութիւնները բղ-

գուշիւ կը պահեն, այլ շատ ստէպ ամուսինները իրարու կը ցուցնեն զանոնք :
Տէ՛կ Տէ՛կոյէ

—Մեր սիրած անձին միայն յատկութիւնները կը տեսնենք, և չսիրած անձին միայն թերութիւնները :
Ուշբեռը

—Երիկ մարդիկ կանանց նկատմամբ այնպիսի ընթացք մը բռնած են՝ որ կ'աշխատին անոնց տալու ամեն թերութիւնները՝ որոնց համար կը գանգատին անոնցմէ : Լ. Տէ՛կոյէ

—Բարեկամութիւը սրատես՝ և սէրը կոյր պէտք է ըլլալ : Ով որ իր բարեկամին թերութիւնները չտեսներ՝ չսիրեր զանի, և ան որ իր սիրուհին միայն թերութիւնները կ'տեսնէ՝ սիրելէ դադրած է :
Բնուիլու

ՆՈԽԱՊԱՇԱՐՈՒՄ

Կիներու նախապաշարումները իրենց իմաստութեան ամենէ ապահով ապաստանարանն է :
Տէ՛կ ու Լուժեր

—Երբ հին նախապաշարում մը կը քանդուի նոր առաքինութիւն մը պէտք կ'ըլլայ :
Տէ՛կ ու Սիւել

—Շատ կիներու իմաստութիւնը իրը և

նախաղաշարում նկատելու վրայ կը կայա-
նայ ինչ որ իրենց քմածին հաճոյքներու կը բ-
նայ արգելք ըլլալ:

* * *

ԽՆՔՆԱՄՈԼՈՒԹԻՒՆ

— Ինքնամոլ կինը հրէշ մ'է , վասն զի բբ-
նութիւնը զինքը ուրիշի համար ստեղծած է :
Օրէօրէ ՏԱ ԼԵՐՔԻՆ

— Ամուսնութիւնը ամեն նախընթաց կա-
պերը խօրտակելու և անոնց տեղ ինքնամո-
լութիւնը դնելու յատկութիւնն ունի :
Յ. Ֆանքէ

— Սիրոյ մէջ այնքան ինքնամոլութիւն
կայ՝ որ լաւագոյն կը համարինք մեր սիրած
անձը գժբաղդ տեսնել՝ քան թէ ուրիշի մը
հետ երջանիկ :

Ա. Բանանց

ԶԱՅՈՒԿ

Առանց զաւակի ամուսնութիւնը՝ առանց
արևի աշխարհք մ'է : Ա. Օքսորքինս

— Ամուսնութիւնը Աստուծոյ կարգադրած
ամենատգեղեցիկ հիմնադրութիւնն է , բարե-
րու ամբարիչտ օրէնքը ուրիշ բան չէ՝ բայց
եթէ բնութեան դէմ բուռն ճնշում մը ,
վասն զի մարդկային կեանքը որքան որ թը-

շուառ, դժուարին ու կարճ է իրեն նպատակ
ունի զաւակներ յառաջ բերել։ Լուսութեա

—Քօնթի իշխանուհին օր մը իր էրկանը
հետ սաստիկ կույւ մ'ըրած ատեն՝ բսաւ ա-
նոր, —Առանց քեզի կրնամ իշխանազուններ
շինել, տէր, բայց դուք առանց ինձի չէք
կրնար։ —Կ'ըսուի թէ բոածը փորձով հաս-
տատեց։ Տէ՛կ

Պղտիկ զաւակ՝ գլխի ցաւ
Մեծ զաւակը որտի ցաւ

Ա. Ա.

—Ինչու թագուհին ունեցած զաւակ-
ներս աւելի տկար են քան թէ անոնք որ
սիրուհիներէս կունենամ, կը հարցնէր Լուի
ԺԴ թագաւորը՝ իր առաջին բժշկին, —Ա-
րովհետեւ, պատասխանեց Կէսօ, ձեր վեհա-
փառութիւնը միայն իր բաժակին լուացուկը
կը տանի թագուհին։ Ա. Ա.

—Ո՞հ, աս տղաքն ի՞նչպէս աղւոր,
ի՞նչպէս աշխոյժ են և առոյդ
կ'ըսէր իշխան մը անոնց հօր,
Որ գեղացի մ'էր ոինտ գիրուկ.
Մինչ մերիններն են վշտարեկ
Վլտիտ, հիւանդ և կամ գունատ.
Դուք, բսէ ինձ, ի՞նչպէս կ'ընէք,
Կայ գաղտնիք մը. . . ինչէ՞ն է ատ-
—Ի՞նչ ըսեմ, տէր, խեղճերս մենք
Մեր զաւկըներն մենք կը շինենք։

— Վայրահաջները կ'հաստատէին թէ եկէ,
որ հաղիւ քոան տարեկան օրիորդ մ'էր
երկու զաւակ էր ունեցած — ի՞նչ գժբաղդ
է աղջիկ մը, բարէ, կ'ըսէր նա, քանի որ
այս շարախօսութեանց ենթակայ է, — Հոգդ
մի՛ ըներ, բաւ իրեն բարեկամ՝ մը, այդ ուռտ
պատմութեան չեն հաւասար, վաճա զի ա-
մեն մարդ գիտէ որ միշտ իր լսածին կէսը
հաւտալ պէտք է :

— Երբ նարօլէ օն Ա. կեսարներու աղջկան
հետ ամուսնանալ ուզեց, բաւական ատեն
տատամիսեցաւ զաւալի բաժանումին ժամը ու-
շացնելու՝ և իրեն ժառանդ մ'ունենալու փա-
փաքներուն մէջ: Վերջապէս օր մը Քօրվիզար
անուն գիտնական և խելացի բժշկին խոր-
հուրդ հարցուց իմանալու համար թէ մին-
չև ո՞ր տարիքը մարդ կընայ ճշմարիտ ժա-
ռանդորդ մ'ունենալու յոյսը տածել: — Ա-
տիկա, պատասխանեց, Քօրվիզար, ամեն մէկ
ամուսինի կազմութենէն, և երիտասարդու-
թեանը մէջ ըրած խնայողութիւններէն կա-
խում ունի: — Կը հասկնամ, պատասխանեց
կայսրը, բայց ձեր կարծիքով ծննդկան կա-
րողութեան միջին պայմանաժամը ո՞րն է: Օ-
րինակի համար նորատի կնոջ մը հետ ամուս-
նացող վաթսուն տարեկան մարդ մը՝ դեռ
զաւակ կ'ունենայ: — Երբեմն: — Հապա եօ-
թանասուն տարեկան մէկը: — Անպատճառ
պատասխանեց բժիշկը: Տէկին ո՛Ապրանիես

— Տիկին աը Սթաէլ օր մը Նարօլէօնի կը
հարցնէր թէ իրեն համար առաջին կինը ո՞վ
էր :— Ամենէ շատ զաւակ ունեցողք, պա-
տասխանէց նա :

— Նորատիև զուարթ կոմսուհիի մը հսմա-
նիներէ մէկը զանի կ'ոտիպէր որ հետք ա-
մուսնանայ : — Բայց գիտէք որ զաւկիները ու-
նիմ, — Տիկին, պատասխանեց երիտասարդք,
կ'երդնում որ ձեր զաւակները իմն պիտի ըլ-
լան : — Երբէք երդում մի ընէք, վրայ բե-
րաւ տիկինը խնդալով, գոհ եղիք եթէ ձեր
զաւակները ձերը ըլլան : Պօհանաւոր

— Խմբագիր մը մանկաբարձ կնոջ մը և եր-
կու վկաներու հետ ընկերացած՝ անցեալները
թաղապետական երեքտասաներորդ շրջանա-
կը կը ներկայանար նորածին երեխայ մը տետ-
րակին մէջ արձանագրել տալու համար : —
Այս երեխային հայրն ո՞վ է, հարցուց պաշ-
տօնեան : Որովհետև այս հարցումը անպա-
տասխան կ'մնար, գրագէտին կողմը դարձաւ
նա և ըստ, — Այդ երեխային հայրը դուքք
էք, պարոն : — Ե՞ս, չէ, ես չեմ : — Ո՞վ
է ուրեմն : — Պարօն, պատասխանեց խմբա-
գիրը քիչ մը կարմրելով, յօդուածը ստո-
րագրուած չէ : Ա. Ռ.

— Դժուարութիւնը զաւակ շինելը չէ՝ այլ
զանոնք սնուցանելը :

Մ-ինք-

Կինը միշտ երեխայ մ'է : Ալֆրեդ ու Վինեն

— Նոր ամսւսնացած իշխան մը միևնոյն ա-
տեն թէ իր կնոջ և թէ անոր սենեկապանու-
հին զաւակ մ'ըրեր էր : Օր մը որ այս գայ-
թակելիի դէպքին վրայ կը խնդային տեղ
մը՝ — ի՞նչ կայ գանգատելու , պատասխա-
նեց զուարձախօս մը , նոր փեսային կողմէ
շատ մեծ քաղաքավարութիւն մ'է առ բանը ,
վասն զի գուշակեր էնա թէ իր կինը ծիծկա-
նի մը պէտք պիտի ունենար : Պօմանուաբ

— Զաւակ մը իր մօրը համար \ ամենէ սի-
րուն , ամենէ գործունեայ , ամենէ ճարտա-
սան պահապան հրեշտակն է . Եթէ մայրը
այդ պաշտելի զաւակին մարմինը կը պահէ ,
զաւակն ալ մօր հոգին կը պաշտպանէ :

Տէնոյէ

— . . . Աստուած մը մեր թշուառու-
թեանց մէջ զաւակին պաշիկներն ստեղծեց
մօրը արցունքներուն համար : Է . Լէնոյէ

— Զարմանալի արհեստագէտ մ'եղաւ այն
մարդը որ առաջին անգամ սէրը մանկան
կերպարանքին տակ նկարեց , վասն զի նա ա-
մենէ յառաջ զգաց թէ սիրահարներու կեան-
քը մշտատե մանկութիւն մ'է՝ ուր ամենէ
մեծ առաւելութիւնները ոչինչ բաներու կը
զոհուին :

Բրօքեր

ՀԱՅՐՈՒԹԻՒՆ

Հայրութիւնը է և կը մնայ միշտ վատա-
հութեան գործ մը . Հայրութիւնը և կասկա-
ծը երկու անբաժանելի բաներ են , մայրու-
թիւնը և ապահովութիւնը համարժէք բա-
ռեր :

Ե. այ Ժէբարդէն

— Կիսերը զիրենք ճնշող դրութեան հա-
կառակ՝ ստացած են այն միակ առանձնա-
շնորհութիւնը զոր պէտք չէինք տալ . վասն
զի կիսը այդ առանձնաշնորհութեամբ կրնայ
իր ամուսնոյն քնդունիլ տալ զաւակ մը որ
անորը չէ՝ և որու ճակտին վրայ բնութիւնը
ճշմարիտ հօրը անունը դրօշմած է :

Ն-բւ Ֆ-բէն

ՄԱՅՐՈՒԹԻՒՆ

Կիսը մալր ըլլալու համար եղած է , հեշ-
տութեան ճամբով առաքինութեան կ'եր-
թան անոնք :

Ե. Ժաղեր

— Առաքինի մօր մը օրինակը մեծագոյն
դասն է որմէ աղջիկը կրնայ օդտիլ :

ԱՆՈՒՆ

Կնոջ՝ էրիկ մարդերէ աւելի ստորին ըլ-
լալուն զգալի նշաններէ մէկն ան է որ նա ա-
մուսնանալով իր անունը կը կորուսնէ։ Այս
սովորութեան մէջ ամբողջ յայտնութիւն մը
կայ։ Հռոմայեցւոց մէջ կինը իր աղջիկի ա-
նունը կը պահէր. Զուիցերիի և քանի մ'ու-
րիշ երկիրներու մէջ էրիկ մարդը կնոջը ա-
նունը իրենին կը կցէ և այսպէսով կրկին ա-
նուն մը կը բաղկացնէ իրենց ընկերական
կեանքը զգալի ընելու համար։ Դանիէլ Սիերն

—Երբ կին մը էրիկ մարդու մ'անունը
օրը միայն երկու անգամ՝ կ'արտասանէ՝ կա-
րելի է անստուգութիւն կայ անոր նկատ-
մամբ ունեցած զգացումներուն վրայ, բայց
այդ անունը երբ երեք հեղ բերանը կ'առ-
նու . . . ո՞հ, ո՞հ, չեմ խառնուիր։ Պալու+

—Զգիտեմ ինչու համար իրարմէ զա-
տուած այր ու կին մը՝ դարձեալ կը պահեն
նոյն անունը որ զիրենք համերաշխ կ'ընէ։
կին մը չանպատուըւիր անանկ մարդու մ'ա-
նունը կրելուն համար որ սիրուհիներ ունի,
բայց էրիկ մարդու մը աղէկ չէ այնպիսի կը-
նոջ մը անունը կրել՝ որու սիրականները տա-
սը մատով կը համբուին։

Ա. Գոր

—Այն էրիկը որ իր կնոջը քուն եղած ժամանակը կը լաէ որ նա իր երազին մէջ որ և է պարսի մը անունը կու տայ, եղջերեայ պատկը կամ կրած է արգէն, կամ կը կրէ և կամ պիտի կրէ : Ճ. Տառապէն

ՀԱՄԲԱԿ

Կնոջ մը համար աւելի դիւրին է իր առաքինութիւնը էրիկ մարդերու դէմ պաշտպանել՝ քան իր համբաւը կիներու դէմ, Խօջորէան

Թէպէտև Տուտուն՝ է շատ ողորմած Համեստի պատիւ կ'ուղէ և անուն Խել մը խաթուններ, շատխօս, վայրահաչ Զայն կարկըտելու կը ժողվին իր տուն. Այդ խումբ մարդատեայ հոն օրըն ՚ի րուն Սէր կը խըճրըծէ խօսքերով քըսփուս, Բէնէլօրի նման բարէ և Տուտուն՝ Ցերեկուան գործը կ'աւրէ մինչև լոյս :

—Կիներու համբաւը աւելի իրենց էրիկներու անխոհեմութենէն՝ քան թէ իրենց սիրողներու բացբերանութենէն զախում ունի : Շանչօք

—Այն կինը որ սաստիկ չսիրեր՝ իր բարի համբաւին վրայ շատ կը հսկէ, սաստիկ սիրահարուած կինը իր անունը դիւրաւ իր սիրոյն կը դոհէ : Ա. Բառանուց

ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ

Անբժութիւնը պահելու ձգտող սեէ ըզ-
դուշութիւն մը աւելորդ չէ . մեծ առաքի-
նութիւնները պղտի զգուշութիւններով կը
պահուին :

Ժ. Ժ. Անուս

ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ

Խոհեմութիւնը և սէրբ իրարու համար ե-
ղած չեն , մէկը կը պակսի քանի միւսը կ'ա-
ւելնայ :

Լոբուջուս

Աէր , սէր , երբ մէկը քու ձեռքը ընկաւ ,
թող խոհեմութիւնն ալ երթայ բարեաւ :

Լոֆունէն

ԴԻՄՈՒԹՅՈՒՆ

—Կնոջ մը դիմագրութիւնը միշտ իր ա-
ռաքինութեան մէկ ապացոյցը չէ , աւելի ըս-
տէոլ իր ունեցած փորձաւութեան նշանն է :
Եթէ անկեղծութեամբ խօսինք՝ ամենքս աչ-
պիստի խօսառվանինք որ մեր առաջին մղու-
մը անձնատուր ըլլալն է , յետու խորհրդա-
ծութեամբ է որ կը դիմագրենք . Բնութիւ-
նը զմեզ սիրելու կը մզէ , դաստիարակու-
թիւնը կը հեռացնէ անկէ՝ և մեր փառքը կը
կայանայ մեր սիրոյն յաղթելու վրայ : Պար-
կեշա կնիկի արուեստը միւս ամեն արուեստ-
ներու կը նմանի , որչափ վարժիս այնչափ
վարպետ կըլլաս :

Աննէն ու Աննէլց

Խնչպէս վտակն ունի հոսանք
Որ կը մղէ իր ջինջ կոհակ .
Քաղցր հոսանք մ'ահա նոյնպէս
Սիրոյ զիրկը տանի զմեզ .
Անտարբեր կալն է խենթութիւն՝
Հոսանքին ոյժն է խիստ ահեղ,
Դիմադրութեամբ պղտիկ առուն
Կրնայ դառնալ մի մեծ հեղեղ :

Կնոջ մը ըրած երկար դիմադրութիւնը է .
ըիկ մարդուն համար նուաստութիւն մը՝ և
նոյն կնոջ համար փառք է : Արանդաւ

Զկայ աւելի կատաղի դիմադրութիւն քան
զայն որ ծունկերը ծուռ եղող կին մը կ'ընէ :
Թէօֆիւ Կոնէւ

ԵՐԵՒՈՅԹ

Առաքինի կին մը չէ թէ իր ամուսնոյն
յարգանացը պէտք է արժանի ըլլալ՝ այլ
նաև զայն գրաւել . եթէ իր ամուսինը զին-
քը պարսաւէ՝ պարսաւելի է նաև երբ ան-
մեղ է նա , յանցաւոր է կասկածելի եղա-
ծին պէս , վասն զի նոյն խոկ երևոյթները իր
պարտաւորութեանց մաս կը կազմեն :

Ուստան

ՅԱՐՉԱԿՈՒՄ

Կնոջ վրայ զգայութեանց կողմէ յարձա-

կելու չէ. կինը իր զգացումներու՝ երևակա-
յութեան՝ կամ մնապարծութեանը շնորհիւ
կը բռնուի:

ՍԻՆ ԲՐԵՒՔԵՐ

ՄԵՐԺՈՒՄ

Սիրոյ մէջ կիները խրոխտաբար կ'զլանան
ինչ որ արդէն կ'ուզէին շնորհած ըլլալ:

ՕՀԵՐ

— Կիները զմեղ կը քաշեն իրենց մեղ
ընձայած վայելքով, բայց իրենց կը կապեն
մերժումներով, այնպէս որ շատ անդամ ըզ-
մեղ ուրիշ կերպով չեն կրնար վայելել բայց
եթէ երջանիկ ըլլալէ զրկուելով։ ՍԻՆ ԲՐԵՒՔԵՐ

— Բանաստեղծ մը հետևեալ խրատը կու-
տար պարմանուհիի մը,

Աղւոր ըլլալ չէ բաւական,
Սիրողիդ սիրոտք քեզկապելու՝
Զի խիստ չքնաղ կինը անդամ
կը պատահի դրուժան մարդու.

Այլ թէ յոյս տաս յամենայնի
Շնորհես քիչ, չըլլաս թոյլտու,
Պաշիկդ իսկ թէ տաս բռնի
Ապահով լեր միշտ սիրուելու։ Ա. Ա.

ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ

Մեր սիրոյ առարկայիններկայութիւնը ամեն

բանի՝ և նոյն իսկ իր պաղութեան դէմ միսի-
թարութէւն մ'է :

— Բացակայութեամբ չէ օր մարդս սէրէն
կընայ բժշկուիլ, այլ իր սիրած էտկին ներ-
կայութեամբը. ամեն օր տեսած անձերնիս
մեզի համար հրապոյր չունենար :

Տիկն ո՞ւ Արքակիւ

ԸՆՇԱՅ

Սիրահարներու իրենց սիրու հիներուն տուած
պղտի ընծաները կը նմանին այն հաւկիթնե-
րուն՝ (Ֆօլ) զորս հաւերը ածել տալու հա-
մար հաւնոցին մէջ կը ձգենք : Ա. Տիւբիյէ

— Երիկ մարդէ ընծաներ ընդունող կինը
պարտք մը կ'ստանձնէ զոր իր անձով վճա-
րելու ենթակայ կ'ըլլայ : Օքէրդ Աւբիսու

Սրտին ու արկղին մէկ է բանալին՝
Գոնէ վայելքին եթէ ոչ սրախն,
Սէրը այս կերպով խիստ շատ յաղթանակ
կը տանի այսօր : — Ալ չունի՞ ոքլաք . . . :
— Ես ալ չգիտեմ, այժմ իր մեծ հըման
է փայլուն ընծան :

Իրաւունք ունի, դի նկատուած պիայ
Ընծայ չսիրող մէջերնիս ովկ կայ :

Լոգանին

Վերջ Առաջին ՄԱՍԻՆ

2531

2532

2533

9-49

2013



2531

2532

